

Համալսարանական կրթությանը կանանց առցիացիա

**ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ձեռնարկ

**ԵՐԵՎԱՆ
«ԱՍՈՂԻԿ»
2013**



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Համալսարանական կրթությամբ
կանանց անոցիակցիա



Empowered lives.
Resilient nations.

ՀՏԴ 342.5(479.25)(07)
ԳՄԴ 67.99(22) ց7
Մ-315

Մ- 315 Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման մակարդակում: Ձեռնարկ. – Եր., «Ասողիկ», 2013. - 118 էջ

**«Մասնակցային ժողովրդավարությունը
տեղական ինքնակառավարման համակարգում»**

ձեռնարկը պատրաստվել է

*Համալսարանական կրթությամբ կանանց անոցիակցիայի կողմից
«Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց
արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում»*

ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է

*ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ և Եվրոպական միության
ֆինանսավորմամբ:*

Ձեռնարկում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի իրավական հիմքերը, տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության կայացման Հայաստանի և այլ երկրների փորձը, տեղական ինքնակառավարմանը կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության հիմնախնդիրները:

Ձեռնարկը նախատեսված է համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների, համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հարցերով շահագրգիռ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև նրանց համար, ովքեր հետաքրքրված են Հայաստանում մասնակցային ժողովրդավարության ձևավորման խնդիրներով:

Ձեռնարկի հեղինակները երախտագիտություն են հայտնում «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում Հայաստանում. կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի ղեկավարությանը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ **Աշոտ Գիլոյանին** արված դիտողությունների և նկատառումների համար:

ՀՏԴ 342.5(479.25)(07)
ԳՄԴ 67.99(22) ց7

ISBN 978-9939-50-253-3

©Համալսարանական կրթությամբ կանանց անոցիակցիա, 2013

Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:



PARTICIPATORY DEMOCRACY IN LOCAL SELF-GOVERNMENT

Manual

**YEREVAN
2013**

«Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման համակարգում» ձեռնարկը

պատրաստվել է Եվրոպական միության և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ-ի) աջակցությամբ: Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության և ՄԱԶԾ-ի տեսակետները:

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրոպական Միությունը բաղկացած է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց փորձը, ռեսուրսները և ճակատագրերը:

Համատեղ, 50 տարիների ընդլայնման ընթացքում, նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունը: Եվրոպական Միությունը հասնւ է ատել կիսելու իր նվաճումները և արժեքներն իր սահմաններից դուրս գտնվող երկրների հետ:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին:

ՄԱԶԾ-ն խթանում է նաև աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Մնայուն ներկայություն ունենալով 177 երկրներում և տարածքներում մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում՝ նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը: ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանը մինչ 2015թ. իրականացնելու ազգային զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Հազարամյակի զարգացման նպատակներին:

"Participatory Democracy in Local Self-Government" Manual

has been produced with the assistance of the European Union and the United Nations Development Programme. The content of the manual is the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and the United Nations Development Programme.

The European Commission is the EU's executive body.

The European Union is made up of 28 Member States who have decided to gradually link together their know-how, resources and destinies.

Together, during a period of enlargement of 50 years, they have built a zone of stability, democracy and sustainable development whilst maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The European Union is committed to sharing its achievements and its values with countries and peoples beyond its borders”.

UNDP partners with people at all levels of society to help build nations that can withstand crisis, and drive and sustain the kind of growth that improves the quality of life for everyone.

On the ground in 177 countries and territories, we offer global perspective and local insight to help empower lives and build resilient nations. UNDP in Armenia has been established in March 1993 and supports the government to reach national development priorities and the Millennium Development Goals by 2015.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	8
1.1. Տեղական ինքնակառավարման ձևերը	10
1.2. Տեղական ինքնակառավարման սկզբունքները և գործառնությունները.....	12
ԳԼՈՒԽ II. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	16
2.1. Տեղական ինքնակառավարման իրավական հիմքերը.....	17
2.2. Տեղական ինքնակառավարման երաշխիքները և ՏԻՄ-երի լիազորությունները.....	25
2.3. Տեղական ինքնակառավարման որոշում ընդունող մարմինները.....	32
2.4. Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների շարունակականության անհրաժեշտությունը.....	36
ԳԼՈՒԽ III. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	44
3.1. Քաղաքացիների մասնակցությունը համայնքի կառավարմանը, հետադարձ կապի ապահովում.....	45
3.2. Համայնքի կառավարմանը քաղաքացիների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում և միջազգային փորձը.....	61
ԳԼՈՒԽ IV. ՉՈՒԳԱԿՇՈՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՐԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ.....	68
4.1. Չուգակշռված ժողովրդավարություն. կանանց և տղամարդկանց հավասարություն: Գենդերը որպես սոցիալ- մշակութային հարացույց, գենդերային կարծրատիպեր, գենդերային նորմեր և գենդերային դերեր.....	69

4.2. Գենդերային իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում.....	74
4.3. Տեղական ինքնակառավարմանը կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության խոչընդոտները: Գենդերային խտրականությունը և դրա դրսևորումները.....	80
4.4. Համալիր մոտեցման անհրաժեշտությունը տեղական ինքնակառավարման ոլորտում: Գենդերային հավասարության համելու աջակցող գործողություններ և ժամանակավոր միջոցներ.....	82
ԳԼՈՒԽ V. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	88
5.1. Ո՞վ կարող է ընտրվել համայնքի ավագանի կամ համայնքի ղեկավար	89
5.2. Ինչպե՞ս մասնակցել ընտրություններին.....	90
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	93
Հավելված 1 - Ընտրություններին վերաբերող հոդվածներ ՀՀ ընտրական օրենսգրքից.....	93
Հավելված 2 - ՏԻՄ ընտրություններին վերաբերվող հոդվածներ ՀՀ ընտրական օրենսգրքից.....	97
Հավելված 3 - Տեղեկատվական օգնություն.....	103
Հավելված 4 - Զաղվածքներ միջազգային փաստաթղթերից.....	108
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	114

I ԳԼՈՒԽ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ
ԵՎ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Չարգացած ժողովրդավարական երկրների արդի փորձը ցույց է տալիս, որ դրանք բարեկեցության բարձր աստիճանի են հասել կենտրոնական կառավարման մակարդակից անկախ, ինքնուրույն տեղական ինքնակառավարման համակարգեր ստեղծելու միջոցով: **Տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության ձև է, որով ժողովուրդն ինքն է իրականացնում իրեն պատկանող իշխանությունը, և որն առանձնահատուկ տեղ է գրավում հասարակության և պետության կառավարման ժողովրդավարական համակարգում:**

Տեղական ինքնակառավարում ասելով՝ հասկանում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և իրական կարողությունը՝ կանոնակարգելու պետական գործերի զգալի մասը և կառավարելու այն, գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և տեղի բնակչության շահերից ելնելով:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդվ. 30

Տեղական ինքնակառավարման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, թե իշխանության տարանջատման և լիազորությունների ապակենտրոնացման արդյունքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ինչպիսի համակարգեր են ձևավորվում, դրանց միջև ինչպիսի փոխհարաբերություններ են առաջանում:

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքների համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 104

1.1. Տեղական ինքնակառավարման ձևերը

Յուրաքանչյուր երկրի տեղական ինքնակառավարման համակարգի յուրահատկությունը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զուգակցումն ու գործակցությունը էապես պայմանավորված են տվյալ երկրի պատմական, աշխարհագրական, Ժողովրդավարական ավանդույթների առանձնահատկություններով: ***Ուստի այդ համակարգերը բազմազան են ու հարափոփոխ: Այդուհանդերձ առանձնանում են տեղական ինքնակառավարման համակարգի չորս՝ դասական (անգլո-սաքսոնական), մայրցամաքային (ֆրանսիական), խորհրդային և խառը ձևեր, որոնց առանցքային առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) փոխհարաբերություններով և հատկապես այդ մարմինների անկախության ու ինքնուրույնության աստիճանով:***

Դասական՝ անգլո-սաքսոնական ձևը սկիզբ է առել Մեծ Բրիտանիայում և տարածում գտել ԱՄՆ-ում, Ջնդկաստանում, Ավստրալիայում, Կանադայում և Նոր Զելանդիայում: Այս ձևի բնորոշ առանձնահատկություններից են **ՏԻՄ-երի անկախության և ինքնուրույնության բարձր աստիճանը, ընտրական համակարգի առկայությունը, բնակչության կողմից վերահսկողությունը և կենտրոնական իշխանության ներկայացուցչի բացակայությունը:** ՏԻՄ-երն իրենց գործունեությունն իրականացնում են ինքնուրույն՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում: Պետության միջամտությունն անուղղակի է և դրսևորվում է համակարգը կարգավորող տիպային օրենքների ընդունումով (ՏԻՄ-երը դրանք իրենց տարածքներում ներդնելիս անհրաժեշտության դեպքում փոփոխություններ են կատարում): ՏԻՄ-երի վրա պետության ներգործությունը դրսևորվում է նաև ֆինանսական հատկացումներով: ՏԻՄ-երի գործունեության վերահսկողությունն իրականացվում է դատական հսկողության միջոցով:

Մայրցամաքային կամ ֆրանսիական ձևը սկիզբ է առել Ֆրանսիայում և կիրառվում է Իտալիայում, Իսպանիայում, Բելգիայում, Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի

մի շարք երկրներում, ինչպես նաև Աֆրիկայի ֆրանսախոս երկրների մեծ մասում: Այս ձևի առանձնահատկություններից են տեղական ինքնակառավարման համակարգում կոմ պետական իշխանության մարմինների, ընտրովի և նշանակովի կադրերի զուգորդումը, կառավարման համակարգի որոշակի հիերարխիան, որում տեղական ինքնակառավարումը ստորադասվում է վերադաս պետական կառավարմանը, տեղական ինքնակառավարման սահմանափակ անկախությունն ու ինքնուրույնությունը, տեղերում պետական հատուկ լիազոր-ներկայացուցիչների առկայությունը, որոնք վերահսկողություն են իրականացնում ՏԻՄ-երի նկատմամբ:

Խորհրդային ձևը, որը բնորոշ էր ԽՍՀՄ-ին և սոցիալիստական ճամբարի երկրներին, ԽՍՀՄ փլուզումից հետո որոշ ձևափոխություններով շարունակում է գործել Չինաստանում, Կուբայում և Զյուսիսային Կորեայում: Այս ձևն աչքի է ընկնում **կենտրոնացվածության բարձր աստիճանով, այսինքն՝ տեղական կառավարումն իրականացվում է կենտրոնի կողմից նշանակված ներկայացուցիչների կողմից:**

Տեղական ինքնակառավարման «խառը» ձևերը գործում են Գերմանիայում, Ավստրիայում, Ճապոնիայում, ինչպես նաև հետ սոցիալիստական և զարգացող երկրներում: Այս ձևում ներառված են դասական (անզլո-սաքսոնական) և մայրցամաքային (ֆրանսիական) ձևերի տարբեր բաղադրիչներ, ինչով էլ պայմանավորված է դրանց բազմազանությունը: Այսուհանդերձ «խառը» ձևերը բնորոշվում են որոշ ընդհանուր առանձնահատկություններով՝ **տեղական ինքնակառավարման ինքնուրույնությամբ և պետական մարմինների որոշ վերահսկողությամբ:**

Տեղական ինքնակառավարման «խառը» ձևի օրինակ է Գերմանիան, որտեղ, ի թիվս այլոց, առկա են այնպիսի տարրեր, ինչպիսիք են «ուժեղ քաղաքատեղը», որը զբաղվում է տեղական հարցերով և միաժամանակ իրականացնում պետական լիազորություններ (ֆրանսիական ձև), «ուժեղ մագիստրատը», որն ընտրվում է պատգամավորների խորհրդի կողմից և կոլեգիալ կարգով իրականացնում է գործադիր իշխանություն (հյուսիսգերմանական ձև), «ուժեղ դիրեկտորը», որը հանդիսանում է գործադիր

իշխանության գլուխը և ընտրվում է կոմունալային խորհրդի կողմից (անգլո-սաքսոնական ձև) և այլն:

Առհասարակ Եվրոպայում տեղական ինքնակառավարման մոտեցումը սահմանազատվում է «հյուսիս-հարավ» առանցքով: Ի տարբերություն Հարավային Եվրոպայի երկրների՝ Սկանդինավյան երկրներն առանձնանում են տեղական ինքնակառավարման ինքնուրույնության բարձր աստիճանով: Ելևելով դրանից՝ այսօր որոշ մասնագետներ առաջարկում են Եվրոպական երկրների այլ դասակարգում: Մի խմբում այսպես կոչված «իրապես ազատ» երկրներն են (Մեծ Բրիտանիա, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա), որոնք աչքի են ընկնում քաղաքացիական ազատությունների բարձր աստիճանով ու միապետական-բյուրոկրատական կենտրոնացման ցածրագույն մակարդակով: Մյուս խմբում «գերագույն իշխանության ազատականացված պետություններն» են (Իսպանիա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա), որոնք հիմնված են բյուրոկրատական ապարատին ընդհանուր ենթակայության վրա, ուստի տեղական մակարդակում էապես սահմանափակված է ինքնուրույն կառավարումը: Այդպիսով, ըստ այդ դասակարգման, առաջին խմբի երկրների համար ելակետը տեղական համայնքն է, իսկ երկրորդ խմբի երկրների համար՝ պետությունը:

1.2. Տեղական ինքնակառավարման սկզբունքները և գործառույթները

Տեղական ինքնակառավարման կազմակերպման հարցերը կանոնակարգվում են դրա վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերով, հատուկ օրենքներով և օրենսդրական ակտերով: Այդ առումով հիմնարար նշանակություն ունի ***Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիան***, որը մշակվել է Եվրոպայում իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների մշտական կոնֆերանսի (ներկայիս Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի) նախաձեռնությամբ և ընդունվել Եվրոպայի խորհրդի անդամ երկրների կողմից Ստրասբուրգում 1985 թ.:

Եվրոպական խարտիան սահմանում է տեղական ինքնակառավարման սկզբունքները՝ այն հիմնարար գաղափարները, որոնք ընկած են բնակչության կողմից ձևավորվող և տեղական գործերն ինքնուրույն կառավարող մարմինների գործունեության հիմքում:

Դրանք են.

- բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծման ինքնուրույնությունը,
- տեղական ինքնակառավարման, դրա մարմինների կազմակերպման առանձնացումը պետական կառավարման համակարգում և պետական իշխանության մարմինների հետ փոխգործակցությունն ընդհանուր ինդիկատորների և գործառնությունների իրականացման հարցում,
- տեղական ինքնակառավարման նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը նրա լիազորություններին,
- տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնակչության առջև,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,
- տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության օրինականությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կոլեգիալությունը,
- տեղական ինքնակառավարման պետական երաշխիքները:

ՎԱՐԺԱՆՔ

Տեղական ինքնակառավարման նպատակները և գործառույթները

Վարժանքի նպատակը

- Ամրապնդել տեղական ինքնակառավարմանը վերաբերող նյութը:
- Մասնակից դարձնել նոր տեղեկությունների ստացմանը և իրենց իսկ մասնակիցների միջոցով բարձրացնել իրազեկությունը:
- Հստակեցնել տեղական ինքնակառավարման գործառույթները (խմբում հավանաբար հավաքված են մարդիկ, որոնք արդեն իսկ տեղական մակարդակում աշխատանքի փորձ ունեն, հետևաբար վարժությունը բարդ չի լինի նրանց համար):

Վարժանքի անցկացում

Բաժանեք լսարանը փոքր խմբերի և առաջարկեք, որ նրանցից յուրաքանչյուրը 7 թույլտված թվարկի տեղական ինքնակառավարման համակարգի որքան հնարավոր է շատ գործառույթներ: 7 թույլտված անց խմբերը պետք է հանձնեն առաջադրանքը: Ցանկալի է, որ դրանք գրված լինեն մեծ պաստառների վրա: Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր գրածը: «Կհաղթի» այն թիմը, որը ՏԻՄ-երի ավելի շատ գործառույթ կնշի և մանրամասն կներկայացնի հանձնարարությունը: Շարադրված մանրամասների հիման վրա առաջարկեք ամբողջացնել նյութը և ընդհանրացնել տեղական ինքնակառավարման համակարգի գործառույթները: Այնուհետև ամփոփեք և ներկայացրեք նյութը:

Վարժանքի ամփոփում

Հենվելով ժողովրդավարության, իշխանության ապակենտրոնացման և տեղական նշանակության հարցերը լուծելու ինքնուրույնության սկզբունքների վրա՝ տեղական ինքնակա-

ռավարումը նպաստում է տեղական և համապետական շահերի զուգակցմանը, ինքնակառավարվող տարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը, բացի այդ, ապահովում է բնակչության կենսական պահանջների բավարարման, քաղաքացիների սոցիալական պաշտպանության հարցերի լուծումը:

Ըստ այդմ՝ **տեղական ինքնակառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.**

- բնակչության մասնակցության ապահովում տեղական նշանակության հարցերի լուծմանը,
- համայնքային սեփականության, տեղական ինքնակառավարման ֆինանսական միջոցների կառավարում,
- համայնքի համալիր զարգացման ապահովում,
- բնակչության սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային և կենսական այլ կարևոր պահանջմունքների բավարարման ապահովում,
- հասարակական կարգի պահպանություն,
- տեղական ինքնակառավարման՝ երկրի Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված շահերի և իրավունքների պաշտպանություն:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Պարապմունքի վերջում նյութն ամրապնդելու համար խորհուրդ է տրվում անցկացնել կլոր սեղան՝ «Պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ. նմանություններ և առանձնահատկություններ» թեմայով: Այն անհրաժեշտ հիմք կդառնա նաև հաջորդ թեմային անցնելու համար:

II ԳԼՈՒԽ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Տեղական ինքնակառավարման իրավական հիմքերը

1991 թ. Հայաստանը, վերականգնելով իր անկախությունը և ընտրելով երկրի ժողովրդավարացման և շուկայական տնտեսության անցման ուղին, ձեռնամուխ եղավ հանրային կառավարման համակարգի բարեփոխումներին:

Սակայն, պայմանավորված օբյեկտիվ պատճառներով (պատերազմական իրավիճակ, շրջափակում, տնտեսական կապերի խզում, Էներգետիկ ճգնաժամ, անցումային շրջանի դժվարություններ), 1991-95 թթ. հանրային կառավարման բարեփոխումների հստակ ռազմավարություն գոյություն չունեցրել, և տարածքային ու տեղական կառավարման համակարգերը մնում էին գրեթե անփոփոխ:

1995 թ. ընդունվեց **ՀՀ Սահմանադրությունը**, որը իրավական հիմք ստեղծեց նոր քաղաքական համակարգի ձևավորման և տարածքային կառավարման բարեփոխումների համար: Սահմանադրության 7-րդ գլուխը (104-110-րդ հոդվ.) ամբողջովին վերաբերում էր տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերին¹: Հետագայում ընդունվեցին մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք հնարավորություն տվեցին կարճ ժամանակում ստեղծելու տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգեր:

ՀՀ Սահմանադրության և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի (ընդունվ. 1995 թ. դեկտեմբերի 4-ին) համաձայն՝ Հայաստանը բաժանվեց 10 մարզի և մայրաքաղաք Երևանի, որը նույնպես ուներ մարզի կարգավիճակ: Մարզերը բաժանվեցին քաղաքային և գյուղական համայնքների, իսկ Երևանը՝ թաղային համայնքների (այժմ՝ վարչական շրջանների, տե՛ս ստորև, էջ 12):

¹ 2005 թ. սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրության 7-րդ գլուխը կրում է «Տեղական ինքնակառավարումը» վերնագիրը և առնչվում է բացառապես տեղական ինքնակառավարման ինդիքներին: Տարածքային կառավարման առնչվող փոփոխությունները տեղափոխվել են Սահմանադրության 5-րդ «Կառավարությունը» գլուխ:

Ներդիր 1. Հայաստանի մարզերը և համայնքները

Հայաստանի մարզային բաժանումը կատարվել է նախկին (խորհրդային տարիների) շրջանների սահմաններով, և յուրաքանչյուր մարզի մեջ ընդգրկվել է 2-5 շրջան:

Ներկայումս Հայաստանում գոյություն ունի 1000 բնակավայր, որոնք միավորված են 915 համայնքներում: Դրանցից 49-ը քաղաքային են, 866-ը՝ գյուղական: Միայն Երևան համայնքն է, որ չի մտնում որևէ մարզի կազմի մեջ: Մարզերն իրենց բնակչությամբ, տարածքով, կազմի մեջ մտնող համայնքների և բնակավայրերի թվով զգալիորեն տարբերվում են միմյանցից: Ամենախիտ բնակեցված մարզերն են Արմավիրը, Արարատը և Կոտայքը (համապատասխանաբար՝ 231, 134 և 136 մարդ՝ 1 քկմ վրա), ամենանոսրը՝ Վայոց ձորը և Սյունիքը (համապատասխանաբար՝ 24 և 34 մարդ՝ 1 քկմ վրա):

Ամենից շատ համայնքները Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում են (համապատասխանաբար՝ 114, 113, 119 և 109): Ամենից շատ քաղաքային համայնքները տեղաբաշխված են Լոռու, Կոտայքի և Սյունիքի մարզերում (համապատասխանաբար՝ 8, 7 և 7), իսկ ամենաքիչը՝ Արագածոտնում, Արմավիրում, Շիրակում և Վայոց ձորում (3-ական): Ցուրաքանչյուր համայնք բաղկացած է մեկ կամ մի քանի բնակավայրերից: Համաձայն Հայաստանի օրենսդրության՝ համայնքները տարբերակվում են ըստ բարձունքային նիշերի (լեռնային են այն բնակավայրերը, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1700-2000 մ բարձրության վրա, բարձր լեռնային՝ 2000 մ-ից բարձր) և սահմանամերձության: Սահմանամերձ համայնքների (ընդհանուր թիվը՝ 184) գերակշիռ մասը գտնվում է Սյունիքի և Տավուշի մարզերում: Բարձր լեռնային և լեռնային համայնքները (ընդհանուր թիվը՝ 375) հիմնականում գտնվում են Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: ՀՀ համայնքների 48%-ը (441 համայնք) 1000-ից պակաս բնակչություն ունի, ընդ որում՝ 300-ից պակաս բնակչություն ունեցողները 196-ն են, իսկ 100-ից պակաս բնակչություն ունեցողները՝ 29: Խոշոր համայնքները (5000-ից ավելի բնակչություն ունեցող) ընդամենը 77-ն են, որոնցից միայն 22-ն ունեն 15000 և ավելի բնակչություն: Փոքր բնակչությամբ ամենաշատ համայնքները գտնվում են Սյունիքի և Արագածոտնի մարզերում, որտեղ 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքները մարզի ընդհանուր համայնքների թվի մեջ կազմում են, համապատասխանաբար, 80%-ը և 66%-ը: Խոշոր համայնքների տեսակարար կշռով ամենամեծ ցուցանիշն ունեն Կոտայքի (19%) և Գեղարքունիքի (18%) մարզերը:

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012 (www.armstat.am/am/?nid=50), ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

1996 թ. մայիսին **«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին»** և հուլիսին **«Տեղական ինքնակառավարման մասին»** ՀՀ օրենքների ընդունումից հետո՝ Նոյեմբեր ամսին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում Հայաստանում սկսեց ձևավորվել տեղական ինքնակառավարման համակարգը: Սահմանվեցին տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքները, ինչպես նաև՝ լիազորությունները:

Մարզերը կառավարվում են պետական կենտրոնական կառավարման համակարգի միջոցով: ՀՀ կառավարությունն է նշանակում և ազատում մարզպետներին, որոնք մարզպետարանների աշխատակազմերի հետ **իրականացնում են տարածքային կառավարման քաղաքականությունը**, համակարգում գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, ապահովում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կապերը, կարգավորում մարզերի իրավասության տակ գտնվող միջհամայնքային հարցերը:

Մարզպետին կից ստեղծվում է մարզի խորհուրդ, որը լիազորություններ չունի և զուտ խորհրդակցական մարմին է²: Այդ խորհրդի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարները և մարզպետը: Վերջինս հրավիրում և վարում է մարզի խորհրդի նիստերը իր սահմանած օրակարգով: Մարզի խորհրդի գործունեությունը սահմանված չէ օրենքով, կարգավորվում է ՀՀ նախագահի հրամանագրով: Այդ խորհուրդը հիմնականում քննարկում է տարածքային քաղաքականության և տարածքային զարգացման հարցեր: Մարզպետը կարող է իր լիազորություններն իրականացնելիս հաշվի առնել այդ քննարկումների արդյունքները:

ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխություններից հետո, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով, ներդրվեց «իրավական հսկողություն» հասկացությունը (հոդվ. 108.1): Նույն թվականին «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը լրացվեց ⁷¹ գլխով (Վարչական հսկողություն տեղական

² «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 81:

ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ), ըստ որի՝ համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (իրավական հսկողություն): Իսկ համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանվում է այդ լիազորությունների իրականացման օրինականությունը, արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով (մասնագիտական հսկողություն): Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինը մարզպետն է:

Երևանը մարզի կարգավիճակ ուներ, սակայն նրա տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը որոշ առանձնահատկություններ ունեին: Երևանի քաղաքապետին նշանակում էր ՀՀ Նախագահը վարչապետի առաջարկությամբ: Երևանում գործում էին 12 թաղային համայնքներ, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակ ունեին:

Երևանի խորհուրդը, որի լիազորությունների շրջանակը սահմանափակ էր, կազմված էր թաղային համայնքների ղեկավարներից և Երևանի քաղաքապետից: Խորհրդի ղեկավարը Երևանի քաղաքապետն էր: Փաստորեն տեղական ինքնակառավարում իրականացվում էր Երևանի առանձին հատվածներում (թաղային համայնքներում), իսկ ամբողջ քաղաքի մասշտաբով իրականացվում էր պետական կառավարում:

2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Երևանին տրվեց համայնքի կարգավիճակ (ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվ.), իսկ թաղային համայնքները լուծարվեցին: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» (2008 թ.) օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին և քաղաքապետը, իսկ 86-րդ հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքը բաժանվեց 12 վարչական


շրջանների, որոնք կազմավորվեցին նախկին թաղային համայնքների սահմաններում և կրում են նույն անվանումները³:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանում գործում է միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգ. տեղական ինքնակառավարումն իրականացվում է միայն համայնքներում: Համայնքի գործունեության կազմակերպման համար համայնքի քնակչությունն ուղղակի ընտրության միջոցով, չորս տարի ժամկետով ձևավորում է տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

Համայնքի ավագանին իր հերթին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Իսկ համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում մշակում և համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում աշխատակազմի և համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների թիվը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույթաչափերը և հաստավելուց հետո նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում, իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին:

³ Երևանը ներկայումս էլ առանձնահատկություններ ունի. ի տարբերություն մյուս համայնքների՝ Երևանի ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով (ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդվ. 150), իսկ համայնքի ղեկավարը՝ քաղաքապետը, ընտրվում է ոչ թե ուղղակի ընտրությամբ՝ ընտրողների քվեարկությամբ, այլ՝ նորընտիր ավագանու կողմից («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 44):

Գծապատկեր 1. Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը



Տեղական ինքնակառավարման ֆինանսական հիմքերի ամրապնդման համար կարևոր էր **«ՀՀ բյուջետային համակարգի մասին»** ՀՀ օրենքի ընդունումը (1997 թ. հունիսի 21), որը պարզաբանում է համայնքային բյուջեի կազմման, կատարման և վերահսկման գործընթացները, կառավարման տարբեր մակարդակների միջև հարկաբյուջետային փոխհարաբերությունները և բյուջեների եկամուտների և ծախսերի տեսակները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը (1998 թ. հունվարի 9), որ սահմանում է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու թույլատրելի չափերը, հիմք ստեղծեց տեղական նախաձեռնության և տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության համար, քանի որ տեղական տուրքերի դրույթաչափերը, տվյալ օրենքով նախատեսված դրույթաչափերի սահմաններում, որոշում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Պետական բյուջեից համայնքային բյուջեներին կատարվող հատկացումները կարգավորվում են **«Ֆինանսական համահարթեցման մասին»** ՀՀ օրենքով (1998 թ. նոյեմբերի 24), որով ամրագրված են ֆինանսական համահարթեցման ձևերը և դրանց հաշվարկման կարգը: Ըստ օրենքի 2000, 2012 և 2013 թթ. փոփոխությունների՝ ներկայումս դոտացիաների գումարների չափը հաշվարկվում է՝

համայնքները տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների և հիմք ընդունելով դրանց տնտեսական վիճակը բնութագրող մի շարք գործոններ: Առաջինների համար նախատեսվող դոտացիաները հաշվարկվում են հավասարաչափ: Յուրաքանչյուր բյուջետային տարում ըստ այդ գործոնների բաշխվող և տվյալ օրենքով ամրագրված հաշվարկման կարգի՝ համայնքների բյուջեներին հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարների չափերը, ինչպես նաև 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին հատկացվող դոտացիայի գումարի չափը սահմանվում է տվյալ տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքով:

2001թ. Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ և 2002 թ. հունվարի 25-ին վավերացրեց **Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան**: Վավերացնելով խարտիան՝ Հայաստանը, մասնավորապես, պարտավորվեց ձևավորել եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման համակարգ, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ, տեղական ինքնակառավարման վարչական կառույցներ և տեղական մակարդակում լիազորությունների իրականացման համապատասխան պայմաններ: Խարտիայի համաձայն՝ ՀՀ-ն ճանաչեց նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսավորման և վարչական հսկողության պատշաճ սկզբունքները և մեխանիզմները, համայնքների միավորվելու իրավունքն ու տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանության սկզբունքը:

2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց **«Համայնքային ծառայության մասին»** ՀՀ օրենքը, որով ամրագրվեցին Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվեցին համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների

իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Անցած տարիներին նշված օրենքները քանիցս լրամշակվել են, քանի որ Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի ավելի քան մեկուկես տասնամյակի փորձը ցույց է տվել, որ երկրի կայուն և հաստատուն զարգացման համար անհրաժեշտ է մշտապես կատարելագործել տվյալ ոլորտին վերաբերող օրենսդրական դաշտը, այն համապատասխանեցնել առկա իրողություններին՝ կատարելով համապատասխան փոփոխություններ օրենքներում և այլ իրավական ակտերում: Այդ է պատճառը, որ **2002 թ. ընդունվեց Նույնիսկ «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենք**, որում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ մի քանի տասնյակ իրավական ակտեր են ընդունվել:

Ինչպես արդեն վերը տեսանք, 2005 թ. ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխում կատարված փոփոխություններն ուղղված էին տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը, ժողովրդավարացմանը, օրենսդրությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև ՀՀ և ԵՄ համագործակցության շրջանակներում ձևակերպված առաջարկություններով ու հանձնարարականներով առաջնորդվելուն:

Մասնավորապես կատարվեցին հետևյալ հիմնական փոփոխությունները.

- համայնքներին պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորումը պետական բյուջեից, համայնքների կողմից տեղական հարկերի և տուրքերի, ինչպես նաև մատուցվող ծառայությունների դիմաց վճարների սահմանման իրավունքը (հոդվ. 106),
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետ սահմանվեց 4 տարին (հոդվ. 107),
- Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ (հոդվ. 108),

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով՝ իրավական հսկողության իրականացումը (հոդվ. 108.1),
- կառավարության կողմից համայնքի ղեկավարի պաշտոնանկության դեպքում սահմանադրական դատարանի եզրակացության պարտադիր լինելը (հոդվ. 109),
- համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են միացվել միմյանց կամ առանձնացվել, ինչպես նաև կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ՝ օրենքով սահմանված կարգով (հոդվ. 110) և այլն:

2.2. Տեղական ինքնակառավարման երաշխիքները և ՏԻՄ-երի լիազորությունները

ՀՀ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումն ապահովում է հետևյալ հիմնական երաշխիքներով.

- ՏԻՄ-երի ինքնուրույնությունը, համայնքների սեփականության իրավունքը և հավասար իրավական պաշտպանություն ամեն կարգի սեփականության ձևերին,
- քաղաքացիների՝ իրենց կամքն ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով և անուղղակի պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով արտահայտելու իրավունքը,
- լիազորությունների տարանջատումը կառավարման տարբեր մակարդակների միջև,
- ՏԻՄ-երի Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը:

ՎԱՐԺԱՆՔ՝ Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

Վարժանքի նպատակը.

- պարզաբանել պետական կառավարման մարմինների և ՏԻՄ-երի լիազորությունների սահմանները
- ձևավորել ըմբռնում, որ այդ լիազորությունների բաժանման հիմքում ռեսուրսների հասանելիությունն ու պատասխանատվության չափն է:

Վարժանքի անցկացում

Այդուսակում ներկայացվում են տարբեր հիմնախնդիրներ տարբեր ոլորտներից, և մասնակիցներին առաջարկվում է պարզել, թե յուրաքանչյուր հիմնախնդիրը կառավարման որ մարմինը պետք է լուծի և ինչու:

Ո՞ր մարմինները պետք է լուծեն հետևյալ հիմնախնդիրները

Հիմնախնդիր	Պետությունների կառավարությունները համատեղ	Պետական մարմինը	ՏԻՄ
Ձերմաստիճանի գլոբալ բարձրացում			
Կեղտոտ բակեր և փողոցներ			
Վատ ճանապարհներ			
Հանրային տրանսպորտի վատ աշխատանք			
Աղբատություն			
Տնտեսական ճգնաժամ			
Մանկական խաղահրապարակների բացակայություն			
Աղբահանություն			
Ջրամատակարարում			
Ցածր աշխատավարձեր			
Ահաբեկչություն			
Պատերազմներ			

Այնուհետև ՏԻՄ-երի համար առանձնացված հիմնախնդիրների օրինակով առաջարկվում է սահմանել նրանց լիազորությունները: Վարժանքի միջոցով ակնհայտ է դառնում, որ խնդիրների լուծումը

կախված է այն հանգամանքից, թե որ մարմինը ավելի արդյունավետ կլուծի դրանք: Ըստ Էուլթյան՝ օրենքում սահմանված երաշխիքները հենց այդ արդյունավետության հաշվառմամբ են տրված:


Վարժանքի ամփոփում

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքներում սահմանված են տեղական ինքնակառավարման հետևյալ երաշխիքները.

- ✓ պետական մարմինների այն բոլոր լիազորությունների փոխանցումը ՏԻՄ-երին, որոնք ավելի արդյունավետ կիրականացվեն համայնքներում,
- ✓ ՏԻՄ-երի, օրենքի սահմաններում, համայնքի շահերից բխող ցանկացած գործունեություն իրականացնելու իրավասությունը, որը օրենքով ամրագրված չէ այլ մարմնի,
- ✓ համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը,
- ✓ ՏԻՄ-երի լիազորությունների կատարման համար համապատասխան ֆինանսավորումը, ֆինանսապես թույլ համայնքներին ֆինանսական համահարթեցման միջոցով օժանդակությունը,
- ✓ ՏԻՄ-երի ինքնուրույնությունը և սեփական պատասխանատվությունը տեղական ինքնակառավարումն իրականացնելիս,
- ✓ ՏԻՄ-երի, սեփական հայեցողությամբ, հանրային ծառայություններ մատուցելու իրավունքը, ներառյալ մրցույթների հայտարարումը,
- ✓ ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանում է սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորություններ: Իրենց հերթին, սեփական լիազորությունները սահմանվում են որպես պարտադիր և կամավոր:

Գծապատկեր 2. ՏԻՄ-երի լիազորությունների տեսակները



Օրենքը տեղական իշխանություններին օժտում է մի շարք **պարտադիր լիազորություններով**՝ ըստ առանձին բնագավառների (ֆինանսական, քաղաքաշինության ու կոմունալ տնտեսության, հողօգտագործման, կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պահպանության և այլն):

Այսպես, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկման բավարար պայմանների ապահովում, հանրային լսումների և քննարկումների կազմակերպում, տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակների ու դրույքաչափերի սահմանում, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձում ու վերահսկում, համայնքի զինապարտների գրանցամատյանի վարում, մասնակցություն գորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի կազմում և հաստատում, համայնքի քաղաքաշինական կադաստրի վարում, իրազեկում համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին, ինքնակամ շինարարության կանխարգելում ու կասեցում և դրա հետևանքների վերացում, շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման

և պահպանման վերահսկում, համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործում, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող հողամասերի օտարում կամ օգտագործման տրամադրում, համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման վերահսկողություն, համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանում և շահագործում, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների հսկողություն և թույլտվություն, համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեության կազմակերպում, համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեության կազմակերպում և կառավարում, համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործում, համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ապահովում և այլն:

Կամավոր լիազորությունների առումով օրենքն ընտրության հնարավորություն է ընձեռում համայնքներին, եթե առկա են դրանք իրականացնելու ֆինանսական միջոցները: Կամավոր լիազորություններն իրականացվում են՝ ելնելով տեղական հարցի հրատապությունից կամ նպատակահարմարությունից և համայնքի հնարավորություններից, ավագանու կողմից սահմանված կարգով, համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներին համապատասխան:

Օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմիններն աջակցում են քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների

լուծմանը, բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, իրականացնում են կառուցապատման աշխատանքներ, համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ, կազմակերպում են համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարություն, աջակցում են համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում են վճարովի հասարակական աշխատանքներ, միջոցներ են ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ և այլն:

Սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում թվարկված կամավոր լիազորությունների ցանկը սպառնիչ չէ: ՏԻՄ-երը կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն, եթե այն օրենքով վերապահված չէ պետական որևէ մարմնի:

Պատվիրակված լիազորությունները պետական իրավասություններ են, որոնց իրականացումը պատվիրակվում է համայնքներին: Պատվիրակված լիազորություններ են համարվում միջոցների ձեռնարկումը տեխնոլոգիական աղետները կանխելու, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպումը, համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և համայնքի հողային հաշվեկշռի կազմումը, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի օտարումը կամ օգտագործման տրամադրումը, համայնքի տարածքում սոցիալական օգնության ծառայության գործունեության կազմակերպումը, համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների, անասնաբուժական կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների

պահպանման աշխատանքների կազմակերպումը, հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողերի պահպանության ապահովումը և այլն:

ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորություններն ապահովում են համայնքի բնականոն կենսագործունեությունը, ենթակա են առաջնահերթ և պարտադիր ֆինանսավորման ու անընդմեջ կատարման: Պարտադիր լիազորությունները ֆինանսավորվում են հավաքված տեղական եկամուտներից և պաշտոնական տրանսֆերտներից⁴, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից:

ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների գումարները հաշվարկվում են «ֆինանսական համահարթեցման մասին» օրենքով սահմանված կարգով: Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից՝ դրանց իրականացման համար նախատեսված հատկացումների հաշվին: Այդ է պատճառը, որ ՏԻՄ-երը պատվիրակված լիազորություններն իրականացնելիս պատասխանատվություն են կրում պետական կառավարման համապատասխան մարմնի առջև: Իսկ սեփական՝ պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման համար ՏԻՄ-երը պատասխանատու և հաշվետու են նախ և առաջ համայնքի բնակչության առջև: Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման:

⁴ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, այլ դոտացիաներ և ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ:

2.3 Տեղական ինքնակառավարման որոշում ընդունող մարմինները

Տեղական ինքնակառավարման ոլորտում որոշում ընդունող մարմինները համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն են:

Համայնքի ավագանին

Ավագանին ներկայացուցչական մարմին է: Ավագանու նիստերը տեղի են ունենում առնվազն երկու ամիսը մեկ անգամ, որոնք հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը:

Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:

Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմինների:

Համայնքի ավագանու որոշումները և ուղերձներն ընդունվում են ավագանու՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Համայնքի ավագանու նիստերը դռնբաց են: Առանձին դեպքերում, ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ, կարող է անցկացվել դռնփակ նիստ: Համայնքի ավագանին նիստերին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստերին մասնակցում են աշխատակազմի աշխատակիցները:

Եթե համայնքի ղեկավարն ավագանու որոշման դեմ առարկում է, ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը: Ավագանին քննարկում է Նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման:

Համայնքի ավագանու որոշումները համայնքի ղեկավարը կարող է բողոքարկել դատական կարգով:

Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է պահանջել, որ հրավիրվի ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին:

Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

Համայնքի ավագանին, որպես ներկայացուցչական մարմին, իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորություններ:

ՎԱՐԺԱՆՔ՝ Տեղական ինքնակառավարման որոշում ընդունող մարմինների լիազորությունները

Վարժանքի նպատակը

- Պարզաբանել համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունները:
- Նպաստել ավագանու լիազորությունների բավականին լայն շրջանակի ըմբռնմանը մասնակիցների կողմից:
- Ընդգծել կոլեկտիվ մարմնի լիազորությունների առավելությունը միանձնյա մարմնի լիազորությունների համեմատությամբ:

Վարժանքի անցկացում

Բաժանեք մասնակիցներին խմբերի: Մի քանի խմբերի հանձնարարեք թվարկել ավագանու լիազորությունները, մյուս խմբերին՝ համայնքի ղեկավարին: Հանձնարարությանը հատկացրեք 10 րոպե: Սկզբում բոլոր թիմերը ներկայացնում են կատարած աշխատանքը մեկը մյուսին լրացնելու սկզբունքով: Այնուհետև նյութը ամփոփվում է պարապմունքավարի կողմից:

Վարժանքի ամփոփում

Ավագանին, ի թիվս այլոց, օժտված է հետևյալ լիազորություններով.

- ✓ ընդունում է իր կանոնակարգը,
- ✓ հաստատում է համայնքի գարգացման ծրագիրը,
- ✓ հաստատում է համայնքի բյուջեն և վերահսկում դրա կատարումը,
- ✓ որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
- ✓ նախաձեռնում և օրենքով սահմանված կարգով նշանակում է տեղական հանրաքվե,
- ✓ որոշում է առաջարկություն ներկայացնել մարզպետին, համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու վերաբերյալ,
- ✓ որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ձևավորելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ստեղծելու վերաբերյալ,
- ✓ որոշում է կայացնում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ,
- ✓ օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին,

- ✓ օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույթաչափերը,
- ✓ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին,
- ✓ որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ,
- ✓ որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին,
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին,
- ✓ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմատիվ ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցերով դիմում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:

Համայնքի ղեկավարը

Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման գործադիր մարմինն է և իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Իր լիազորությունների շրջանակներում համայնքի ղեկավարը, ի թիվս այլոց, հրավիրում և վարում է ավագանու նիստերը, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու

պաշտոնային դրույքաչափերը, ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում, իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին, համայնքի զարգացման քառամյա ծրագիր է ներկայացնում ավագանու հաստատմանը, համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծ է ներկայացնում ավագանու հաստատմանը, օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ, օրենքով կամ կառավարության սահմանած կարգով միջոցներ է ձեռնարկում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար, վերահսկում է ավագանու որոշումների իրականացումը:

2.4 Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների շարունակականության անհրաժեշտությունը

Րայաստանի տեղական ինքնակառավարման անցած 17 տարիների փորձը ցույց է տալիս, որ այն հիմնականում ձևավորված է: Ստեղծված են տեղական ինքնակառավարման քաղաքական, տնտեսական, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմքերը: Սակայն դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան: Տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս չեն կարողանում լիարժեք բավարարել իրենց համայնքների նվազագույն կարիքները: Նրանք չեն ձևավորվել որպես միասնական ուժ՝ իրենց շահերը ներկայացնելու ու պաշտպանելու համար և լիարժեք չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում: Մինչդեռ ժամանակի մարտահրավերներն այդ համակարգի հետագա զարգացման, հզորացման և ժողովրդավարացման նոր ու ավելի բարդ խնդիրներ են առաջադրում, որոնք արագ ու հետևողական արձագանք են

պահանջում: Հետևաբար այս ոլորտում բարեփոխումների շարունակականությունը և համակարգային ու համալիր մոտեցումները եղել և մտում են երկրի կայուն զարգացման առաջնահերթությունների թվում:

Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքը

1. *Մասնակից պետությունները, իրենց իրավասությունների շրջանակներում, պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը:*
2. *«Տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունք» նշանակում է տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը:*
3. *Այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով...*

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածից

1996 թվականից՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի սկզբնավորումից ի վեր, Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), համագործակցելով միջազգային և տեղական կառույցների հետ, հետևում և վերլուծում է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը:

2012 թ. «Զաղացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության (ԶՀՏԻԱ) ծրագրի» շրջանակներում վեց հասարակական կազմակերպություններ (Համայնքների ֆինանսիստների միավորում, Հայաստանի համայնքների միություն, Հայաստանի ավազանիների ասոցիացիա, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոն, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ) համատեղ մշակել են «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումները» (ՏԻՀԶԻԱՌՄ):

Ներդիր 2. Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը Համայնքների ֆինանսիստների միավորման մշտադիտարկմամբ

Անցած տարիներին ՀՖՄ-ն հրատարակել է հինգ գիրք, որոնցում տրվել են բարեփոխումների ընթացքի գնահատականը և բարեփոխումների շարունակմանը վերաբերող բազմաթիվ առաջարկություններ: Առաջին՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. բաղաբաղանդային տարբերակներ և ուղիներ» գրքում ներկայացվել են 1996-ից մինչև 2004 թ. տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը լուսաբանող հոդվածներ: Երկրորդը, որ հրատարակվել է 2008-ին, վերաբերում է 2004-2006 թթ. տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատականին: Երրորդ, չորրորդ և հինգերորդ գրքերը, որոնք ներկայացնում են 2007-2008, 2009-2010 և 2011 թթ. իրավիճակը, շարադրված են գեկույցների ձևով, գնահատականները տրված են ըստ բնագավառների, բացի այդ, լուսաբանվում են ոլորտում առկա հիմնախնդիրները և տրվում են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկա իրավիճակի ուսումնասիրության հիման վրա ռազմավարության հեղինակներն արձանագրում են. «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն ուղղակիորեն կապված է ապակենտրոնացման և ժողովրդավարացման ընդհանուր գործընթացների խորացման հետ: Այդուհանդերձ, տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումները Հայաստանում կատարվում են համակարգային և համալիր մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը վտանգում է այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը»⁵:

«Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումների» հիմնական նպատակը և ակնկալվող վերջնական արդյունքը Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացումն է:

⁵ «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ», Եր., 2012, էջ 15:

Իսկ ռազմավարության իրականացման վերջնական արդյունքները գնահատվելու են ՀՀ համայնքների բյուջետային ծախսերի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերությամբ: «Վերջին երեք տարիներին այս ցուցանիշն անշեղորեն աճել է, ընդ որում 2008 թ. նկատմամբ 2010 թ. այս ցուցանիշը աճել է ավելի քան 1.5 անգամ՝ կազմելով շուրջ 2.4%: Այդուհանդերձ, այս ցուցանիշով Հայաստանը զիջում է ԵՄ անդամ երկրներին, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մեծամասնությանը», - նշում են ռազմավարության հեղինակները⁶:

ՀՀ տեղական ինքնակառավարման ներկա իրավիճակի և միջազգային փորձի հիման վրա ռազմավարության հեղինակներն առաջարկում են մինչև 2025 թ. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և ապակենտրոնացման քաղաքականության գերակա ուղղություններն ու խնդիրները:

2006 թ. Նոյեմբերին ստորագրված Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համատեղ գործողությունների ծրագրով ամրագրվեցին Հայաստանի զարգացման եվրոպական ուղու գերակայությունները, ՀՀ կառավարությունը վերահաստատեց եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման, այդ թվում՝ համայնքների ու համայնքային ծառայության ինստիտուտների ամրապնդման, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառման պարտավորությունը:

2010 թ. ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը Հայաստանի համայնքների միության հետ համատեղ և Եվրոպայի խորհրդի փորձագետների օժանդակությամբ մշակեց Եվրոպայի խորհուրդ – ՀՀ կառավարություն գործողությունների պլան՝ կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ, որը 2011-2014 թթ. մի շարք միջոցառումներ է նախատեսում հետևյալ հիմնախնդիրների լուծման նպատակով. իշխանությունների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանության ապահովում, հանրային կառավարման արդյունավետության բարելավում տեղական մակարդակում, տե-

⁶ Նույն տեղում, էջ 22:

ղական ինքնակառավարման օրենսդրական բազայի բարելավում, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի արդյունավետ իրականացում:

Ստեղծված իրավիճակի բարեփոխման նպատակով ՀՀ կառավարությունը 2011 թ. նոյեմբերի 11-ին հաստատել է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը, որում տեղական ինքնակառավարման իրավիճակի վերլուծությամբ և խնդիրների վերհանմամբ հիմնավորվում է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման անհրաժեշտությունը, առաջարկվում են դրանց օրենսդրական հիմքերը, սկզբունքները, չափորոշիչները, միջազգային փորձը, իրականացմանն ուղղված միջոցառումների ցանկը և այլն:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, արդի մարտահրավերներին արձագանքելու նպատակով, ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավական պետության արժեքների և չափանիշների փաստացի կիրառման առումով հենասյուն են դիտում լավ կամ պատշաճ կառավարումը: Այն առավել կարևորվում է տեղական մակարդակում, քանի որ ՏԻՄ-երն ավելի մոտ են քաղաքացիներին, նրանց մատուցում են հանրային ծառայություններ, ավելի հասանելի են և արագորեն են արձագանքում ծագող հիմնախնդիրներին:

Եվրոպայի խորհրդի անդամ երկրների նախարարները դեռևս իրենց խորհրդաժողովի 14-րդ նստաշրջանում⁷ հանգել են այն եզրակացության, որ «անդամ երկրների կողմից հետապնդվող հիմնական խնդիրը պատշաճ տեղական և տարածաշրջանային ինքնակառավարման մատուցումն է, որպեսզի դիմակայեն մեր հասարակությունների առջև ծառացած մարտահրավերներին և բավարարեն քաղաքացիների օրինական ակնկալիքները»:

Նույն 2005 թ. Վարչավայում Եվրոպայի խորհրդի անդամ երկրների պետությունների և կառավարությունների ղեկավարներն իրենց 3-րդ գագաթաժողովում հայտարարեցին. «Արդյունավետ ժողովրդավարությունը և արդյունավետ կառավարումը բոլոր մակարդակներում կարևոր են կոնֆլիկտների կանխման, կայունության

⁷ Նստաշրջանը տեղի է ունեցել Բուդապեշտում 2005 թ.:

խթանման, տնտեսական և սոցիալական առաջընթացի համար և, հետևաբար, կայուն համայնքների ստեղծման համար, որտեղ մարդիկ կցանկանան ապրել և աշխատել այժմ և ապագայում»:

2007 թ. աշխատանքներ են սկսվել այն սկզբունքների ճանաչման ուղղությամբ, որոնք պետք է բնութագրեին «տեղական մակարդակում պատշաճ ժողովրդավարական կառավարման» ելությունը, և այն ուղիների ու միջոցների ուղղությամբ, որոնց շնորհիվ այն կդառնա Եվրոպայի տեղական իշխանությունների համար միասնական նպատակ: Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը հավանություն տվեց նախարարների խորհրդաժողովում ներկայացված «Նորարարության ռազմավարություն և պատշաճ կառավարում» հայեցակարգին: Իսկ Տեղական և տարածաշրջանային ինքնակառավարման համար պատասխանատու եվրոպական նախարարների հաստատումից հետո Եվ Նախարարների կոմիտեն այն ստորագրեց 2008 թ. մարտին:

«Նորարարության ռազմավարություն և պատշաճ կառավարում» ռազմավարությունը տալիս է լավ կառավարման ընդգրկուն սահմանումը (լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները) և դրա իրականացման մեխանիզմը: Ըստ այդմ՝ տեղական մակարդակում լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներն են՝

- ընտրությունների, ներկայացուցչության և մասնակցության արդար իրականացում,
- արձագանքելու պատրաստակամություն,
- տնտեսական և սոցիալական արդյունավետություն,
- հրապարակայնություն և թափանցիկություն,
- իրավունքի գերակայություն,
- անբասիր վարք,
- իրավասություն և կարողություն,
- Նորամուծություն և փոփոխությունների պատրաստակամություն,
- կայունություն և երկարաժամկետ ուղղվածություն,
- հստակ ֆինանսական կառավարում,

- մարդու իրավունքներ, մշակութային բազմազանություն և սոցիալական միասնություն,
- հաշվետվողականություն:

Տարեցտարի ավելի ու ավելի շատ պետություններ են միանում այդ ռազմավարությանը, սակայն իրավամբ նշվում է, որ այդ սկզբունքները «փարոս» կարող են դառնալ բոլոր այն պետությունների համար, որոնք քայլում են տեղական ինքնակառավարման կայացման ու կատարելագործման ճանապարհով:

2009 թ. նոյեմբերին նախարարների 16-րդ խորհրդաժողովում ընդունված Ուտրեխտի հռչակագրում («Պատշաճ տեղական և տարածաշրջանային ինքնակառավարումը անկայուն ժամանակներում. փոփոխությունների մարտահրավերը») նշվել են համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հետևյալ մարտահրավերները.

1. ներկա ֆինանսա-տնտեսական ճգնաժամի ազդեցության կառավարում,
2. ուշադրության սևեռում տեղական և տարածաշրջանային մակարդակներում մասնակցության ցածր մակարդակի վրա,
3. տեղական և տարածաշրջանային ինքնակառավարման համակարգերի բարդության և ծախսերի նվազեցում և դրա արդյունավետության խթանում,
4. տեղական և տարածաշրջանային համայնքների կամ իշխանությունների կարողությունների հզորացում կամ կառավարման որակի բարձրացում,
5. ուշադրության սևեռում ժողովրդագրական/միգրացիայի միտումների ազդեցության վրա,
6. տեղական և տարածաշրջանային մակարդակներում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիության բարելավում,
7. տեղական և տարածաշրջանային իշխանությունների միջսահմանային համագործակցության դյուրացում,
8. ուշադրության սևեռում տեղական և տարածաշրջանային իշխանություններում և նրանց միջև առկա տարածքային անհավասարությունների վրա,

9. ուշադրության սևեռում քաղաքային և գյուղական համայնքների միջև առկա անջրպետի խորացման վրա,
10. հասարակության միասնության ուժեղացում և քաղաքական ու կրոնական ռադիկալիզմի դեմ գործողությունների իրականացում,
11. տեղական և տարածաշրջանային իշխանություններում կոռուպցիայի դեմ պայքար,
12. ուշադրության սևեռում բնակչության մասնակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների աճող ազդեցության վրա,
13. ուշադրության սևեռում մեծ քաղաքների աճի վրա՝ ի հաշիվ միջին և փոքր գյուղերի ու քաղաքների:

Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների նախադրյալներ են ստեղծում վերջին տարիներին կազմակերպվող համաժողովներն ու գիտաժողովները: Այսպես, 2011 թ. ի վեր ամեն տարի հոկտեմբեր ամսին կազմակերպվում է գյուղական համայնքների համաժողով: Վերջին՝ 3-րդ համաժողովը կազմակերպվեց 2013-ի հոկտեմբերի 3-5-ը Ջերմուկ քաղաքում: 2011 թ. հունիսի 3-ին տեղի ունեցավ «Համայնքային զարգացման ուղիներ. քաղաքացիական երկխոսություն և մասնակցային կառավարում» համաժողովը, նոյեմբերի 1-2-ը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում. ձեռքբերումներ, հիմնախնդիրներ, հեռանկարներ» թեմայով գիտաժողով, 2013 թ. հունիսի 19-ին՝ «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում» թեմայով միջազգային համաժողովը, որոնց ընթացքում քննարկվել են տեղական ինքնակառավարման արդի վիճակը, հիմնախնդիրները, դրանց լուծման գործնական ուղիները և հետագա զարգացման ուղենիշները:

Այսպիսով, հիմնախնդիրների վերհանման արդյունքում թե՛ տեղական, թե՛ միջազգային մակարդակով համապատասխան առաջարկություններ են արվում դրանք լուծելու համար՝ կրկին ու կրկին շեշտելով, որ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման թիվ մեկ խնդիր է մտնում բարեփոխումների ընթացքի շարունակականությունն ու արագացումն այդ ոլորտի բոլոր ուղղություններով:

III ԳԼՈՒԽ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

3.1. Քաղաքացիների մասնակցությունը համայնքի կառավարմանը. հետադարձ կապի ապահովում

Ժողովրդավարություն ասելով, ի թիվս այլ կարևոր տարրերի, հասկանում ենք քաղաքացիների մասնակցություն իրենց իսկ կյանքին առնչվող որոշումների ընդունման գործընթացներին: Չկա ժողովրդավարություն, եթե հասարակական գործընթացներում ներգրավված չեն այն մարդիկ, որոնք հանրային քաղաքականությունների և որոշումների գլխավոր շահառուներն են:

Հետևաբար տեղական մակարդակում իրական ժողովրդավարության հիմնական նախապայմաններից մեկն այն է, որ քաղաքացիներն իրավունք ունենան ազդելու իրենց համայնքի ներկայացուցչական մարմինների այն որոշումների վրա, որոնք վերաբերում են իրենց կյանքին, կենցաղին և համայնքին: Ըստ այդմ՝ տարբերում են ժողովրդավարության երկու հիմնական ձև՝ **ներկայացուցչական ժողովրդավարություն և մասնակցային ժողովրդավարություն:**

Ներկայացուցչական ժողովրդավարությունը կառավարման այն ձևն է, որն իրականացնողներն ուղղակի ընտրություններով ընտրված անհատներն են, Հայաստանի դեպքում՝ համայնքի ավագանու անդամները և համայնքի ղեկավարը:

Մասնակցային կամ ուղղակի ժողովրդավարության ամենակարևոր գործիքը մասնակցային կառավարման ապահովումն է: Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում այնպիսի գործընթաց է, որն ընդգծում է բնակչության լայն մասնակցությունը համայնքային քաղաքականության մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:

Տեղական ինքնակառավարման համակարգում ուղղակի ժողովրդավարության ձևերից են՝

- տեղական հանրաքվեն,
- հանրային նախաձեռնությունը,
- քաղաքացիների հանձնաժողովը,
- համայնքային ժողովը,
- հանրային լսումները,
- խնդրագիր/պահանջագիրը,
- համացանցային հաղորդակցությունը,
- շուկայական կառուցակարգերը և այլն:

Քաղաքացիների մասնակցությունը կարող է լինել՝

- ակտիվ, երբ քաղաքացիները համագործակցում են իրենց իսկ կողմից ընտրված ՏԻՄ-երի կամ համայնքի աշխատակազմի հետ, որպեսզի ազդեցություն ունենան հանրային որոշումների վրա, և
- պասիվ, երբ քաղաքացիները պարզապես հաճախում են հանրային հանդիպումներին՝ ՏԻՄ-երի նոր ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու կամ ընտրություններին մասնակցելու համար:

Մասնակցային կառավարում փաստորեն նշանակում է նոր տիպի փոխհարաբերությունների ձևավորում համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև: Այն ընդգրկում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ և գործընթացներ, որոնք ապահովում են փոխադարձ կապը և փոխազդեցությունը տեղական իշխանությունների և նրանց մատուցած ծառայություններից օգտվող շահառուների միջև:

Դրանք ոչ միայն տեղական ինքնակառավարման պաշտոնական ինստիտուտներն են (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար և այլն), այլև այն ինստիտուտները և կազմակերպությունները (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն), որոնք որոշակի ազդեցություն ունեն տեղական ինքնակառավարման կամ համայնքի կառավարման իրականացման վրա:

Տեղական իշխանությունները, այս դեպքում, քաղաքականություններ և որոշումներ են ընդունում ոչ թե մեկուսացված ձևով, այլ խորհրդակցելով բոլոր նրանց հետ, ովքեր անմիջականորեն կրում են դրանց ազդեցությունը: Այդ փոխհարաբերություններում կարևոր և ծանրակշիռ դեր ունեն տեղական իշխանությունները, սակայն նրանք չեն որոշում ամեն ինչ:

Մասնակցային կառավարումը վերաբերում է միայն տեղական իշխանությունների և համայնքի բնակիչների կոլեկտիվ շահերի վրա հիմնված փոխհարաբերություններին: Այն չի ընդգրկում անձնական շահի վրա հիմնված կամ անհատական (թեկուզ կառավարմանը վերաբերող) փոխհարաբերությունները:

Մասնակցային կառավարման հիմնական դերակատարները, այսպիսով, ՏԻՄ-երը և համայնքի բնակիչների խմբերն են, և նրանց փոխհարաբերություններում ակտիվ դերում պետք է հանդես գան առաջինները:

ՏԻՄ-երի և խորհրդատվական կազմակերպությունների միջև կապերի հաստատման արդյունքում ՏԻՄ-երը լրացնում են իրենց կարողությունների պակասը և ավելի բարձր մակարդակով են կատարում իրենց լիազորություններն ու խնդիրները, մյուս կողմից՝ զարգացում են ապրում հասարակության տարբեր հատվածները ներկայացնող սուբյեկտները:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության մասին՝ որպես ժողովրդավարական սկզբունքի, նշված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ներածությունում և 3-րդ հոդվածում: Ի լրումն՝ 2009 թ. ընդունվել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին (հավելված III), որում ամրագրված են տեղական իշխանության գործերին բնակչության մասնակցության իրավունքի բացատրությունը և այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը օրենքով սահմանելու անհրաժեշտությունը⁸:

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսն իր հերթին ընդունել է բազմաթիվ որոշումներ և հանձնարարականներ, որոնցում զարգացրել է տեղական ինքնակառավարման առջև ծառայած խնդիրների լուծման ուղղությունները:

Համայնքի բնակիչների առջև ծառայած առօրյա խնդիրների գերակշիռ մասը տեղական նշանակություն ունի: Ամեն օր մարդիկ օգտվում են այնպիսի հանրային ծառայություններից, ինչպիսիք են բնակարանային-կոմունալ ծառայությունները (ջրամատակարարում և ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, աղբահանություն, բնակելի շենքերի շահագործում ու նորոգում և այլն), ներհամայնքային փողոցների և ընդհանուր օգտագործման վայրերի մաքրության ապահովումը, գիշերային լուսավորությունը, բարեկարգումը և կանաչապատումը, կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության և սոցիալական ոլորտներում մատուցվող առաջնային ծառայությունները: Այս խնդիրների լուծման եղանակներից են կախված մարդու կենսամակարդակը և կեն-

⁸ Հայաստանը լրացուցիչ արձանագրությունն ստորագրել է 2010 թ. մարտի 18-ին:

սագործունեության ապահովումը: Յետևաբար այդ խնդիրների արդյունավետ լուծման հարցում ամենից ավելի շահագրգռված են հենց իրենք՝ համայնքի բնակիչները:

Կառավարման կենտրոնացված համակարգում վերը նշված խնդիրները լուծվում են «վերևից»՝ կենտրոնացված կարգով դրանք պլանավորելով, դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելով, դրանք ֆինանսավորելով և կատարելով: Ուստի այդ խնդիրների լուծումը միշտ չէ, որ համապատասխանում է տեղի կարիքներին, իսկ համայնքի բնակչությունը, փաստորեն, զրկված է իրեն վերաբերող կամ հետաքրքրող խնդիրների լուծման գործում ուղղակի մասնակցություն ունենալու հնարավորությունից: Դրա հետ մեկտեղ, կենտրոնացված համակարգում չի իրականացվում խնդիրների լուծման արդյունավետ վերահսկողություն, քանի որ վերահսկող պետական պաշտոնյան տեղի բնակիչ չէ և անմիջականորեն չի զգում այս կամ այն խնդրի լուծման ազդեցությունը:

Կառավարման ապակենտրոնացված համակարգում մոտեցումը նշված հարցերին արմատապես ուրիշ է. համայնքի յուրաքանչյուր բնակիչ իր համայնքի տերն է, համայնքային խնդիրների արդյունավետ լուծման ամենաշահագրգիռ անձը և, բնականաբար, նա էլ պետք է մասնակցի համայնքի կառավարման ու զարգացման գործին՝ ձևավորելով տեղական իշխանություն կամ ՏԻՄ-եր, իր մասնակցությունը բերելով այդ խնդիրների լուծմանը և վերահսկելով ՏԻՄ-երի գործունեությունը:

Այսպիսով, կառավարման ապակենտրոնացված համակարգում համայնքն իրավունք է ստանում ինքնուրույն լուծելու տեղական նշանակության խնդիրները, քանի որ դրանց ժամանակին և արդյունավետ լուծումները, ինչպես նաև դրանց կատարման վերահսկողությունն առավել մոտիկից և շահագրգիռ կարող է իրականացնել հենց ինքը՝ համայնքը:

«Տեղական ինքնակառավարում» և «տեղական իշխանություն» հասկացություններն առավել հստակ ձևակերպված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածում. «Տեղական ինքնակառավարումը տեղական իշխանությունների (ՏԻՄ-երի) իրավունքն ու իրական ունակությունն է՝ նպատակաուղղված պետական գործերի մի զգալի մասի կանոնակարգմանը և

կառավարմանը՝ գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և ելնելով տեղական բնակչության շահերից: Այդ իրավունքն իրականացնում են խորհուրդները կամ ժողովները, որոնց անդամներն ազատորեն ընտրվում են ուղղակի, հավասար և ընդհանուր ընտրությունների հիման վրա, գաղտնի քվեարկությամբ: Խորհուրդները կամ ժողովները կարող են ունենալ իրենց հաշվետու գործադիր մարմինները: Սույն դրույթը չի բացառում քաղաքացիների ժողովների, հանրահավաքների կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի կիրառումը, եթե դա թույլատրված է օրենքով»:

ՀՀ օրենսդրությունում տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում. «Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»:

Այդ իրավունքի իրացման նպատակով տեղական ինքնակառավարմանը վերաբերող ՀՀ օրենսդրությունում ամրագրված են որոշակի, ընթացակարգեր և դրույթներ, որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս այս կամ այն կերպ համագործակցություն ծավալելու համայնքի ՏԻՄ-երի հետ և իրենց մասնակցությունն ու ներդրումը բերելու համայնքի արդյունավետ կառավարման գործում:

«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թ. ՀՀ օրենքում ամրագրված տեղական ինքնակառավարման 9 սկզբունքներից երկուսը վերաբերում էին ՏԻՄ-երի՝ համայնքի անդամների առջև հաշվետու լինելուն և գործունեության հրապարակայնությանն ու թափանցիկությանը: Սակայն քաղաքացիների ուղղակի մասնակցությունը համայնքի կառավարմանը որևէ կերպ արտացոլված չէր տեղական ինքնակառավարման սկզբունքներում:

2013 թ. փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց 2009 թ. նոյեմբերի 16-ին Ուտրեխտում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի «Տեղական

ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի մասին» լրացուցիչ արձանագրությունը, որը Հայաստանում ուժի մեջ մտավ 2013 թ. սեպտեմբերի 1-ից: Արձանագրության դրույթներին համապատասխան՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվեցին լրացումներ⁹, որոնք միտված էին օրենսդրոյուն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Մասնավորապես, 9-րդ հոդվածը, որում թվարկված էին տեղական ինքնակառավարման 9 սկզբունքները, լրացավ 10-րդ սկզբունքով, այն է՝ տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը: Ավելացավ 10.1 հոդվածը՝ «Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը», որով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է «որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա»:

Այս լրացումներով, փաստորեն, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը բնակչության մասնակցելու նոր ինստիտուտ ներդրվեց. համայնքի 16 տարին լրացած բնակիչները հնարավորություն ստացան հանդես գալու համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ:

Օրենքով կանոնակարգվեցին համայնքի բնակիչների ընդունելությունների, հանրային հանդիպումների և քննարկումների կազմակերպման, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի իրականացման վերաբերյալ ավագանու անդամների պարտավորությունները:

Այսպես, օրենքի 12-րդ հոդվածը լրացվեց 2-րդ պարբերությամբ, ըստ որի՝ 10 հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում

⁹2013 թ. հունիսի 19-ին ընդունված ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»:

համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքում հաշվառված, 16 տարին լրացած անձանց ոչ պակաս, քան 1%-ը, հազարից մինչև 10 հազար բնակիչ ունեցող համայնքներում՝ 2%-ը, և մինչև հազար բնակիչ ունեցող համայնքներում՝ 4%-ը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և սույն հոդվածով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում դրա հերթական (սակ առաջին) քննարկումից առնվազն 6 ամիս հետո:

Օրենքը լրացվեց նաև «Համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը» (54.1) հոդվածով, որի համաձայն՝ «համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ)»:

Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը պարտավոր է կազմակերպել և անցկացնել հանրային բաց լսումներ կամ քննարկումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածով սահմանված ժամկետում: Համայնքի ղեկավարը հանրային բաց լսումներում կամ քննարկումներում արված և ընդունված դիտողությունների, առաջարկությունների մասին իրազեկում է համայնքի ավագանուն:

ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման համար կարևոր նշանակություն ունի համայնքի ավագանու նիստերի մասին ամբողջական տեղեկատվության տարածումը ինչպես համայնքի տարածքում քաղաքացիներին մատչելի տարբեր վայրերում, այնպես էլ, հնարավորության դեպքում, զանգվածային լրատվական միջոցներով և համացանցով, որի շնորհիվ համայնքի բնակչության առավել լայն շրջանակներ են հնարավորություն ունենում տեղեկանալու համայնքային գործընթացներին:

Համացանցային կայքեր ունեն այսօր 915 համայնքներից 208-ը¹⁰: Թեպետ ՀՀ օրենսդրությունը չի պարտադրում ՏԻՄ-երին (բացառությամբ Երևանի)¹¹ ունենալ և վարել պաշտոնական կայքեր, ՏԻՄ-երը սեփական նախաձեռնությամբ ստեղծում են դրանք:

Եվ Հայաստանի տեղական ինքնակառավարման վիճակի մշտադիտարկման վերջին՝ 2011 թ. զեկույցում այս հանգամանքն իրավամբ որպես նշանակալի առաջընթաց է գնահատվում: «Բացի այդ, առաջընթաց է նկատվում նաև կայքերի բովանդակային մասում: 2011-ին ՏԻՄ-երին բաժին չի հասել զաղոսնիության և վատ աշխատանքի խորհրդանիշ համարվող «ժանգոտ կողպեք» մրցանակը¹², որն ամեն տարի Տեղեկատվության ազատության միջազգային օրը՝ սեպտեմբերի 28-ին, «շնորհում» է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը: Նվազել է «սև ցուցակներում» ՏԻՄ-երի ներկայացուցիչների ընդգրկվածությունը», - ասվում է զեկույցում: Այսուհանդերձ, 2013 թ. «ժանգոտ կողպեք» ստացավ Հայաստանի ամենամեծ համայնքի՝ Երևանի քաղաքապետարանը որպես քաղաքացիների հարցումներին ամենից դանդաղ պատասխանող մարմին:

Այսպես թե այնպես համայնքների գործունեության հրապարակայնության ապահովման ժամանակակից միջոցների լայն-

¹⁰ Ոչ բոլոր կայքերն են, սակայն, որ միշտ հասանելի են և լիարժեք տեղեկություններ են բովանդակում համայնքի ավագանու և ղեկավարի գործունեության մասին:

¹¹ Երևանի համայնքի համացանցային պաշտոնական կայքը՝ www.yerevan.am, ամրագրված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Նույն օրենքով նախատեսված են նաև համացանցային կայքում պարտադիր հրապարակման ենթակա իրավական ակտերն ու տեղեկությունները:

¹² Տեղական ինքնակառավարումը Հայաստանում: 2011 թ. /խմբ.՝ Դ. Թումանյան: Եր., 2012, գիրք 5, էջ 82:

րեն կիրառումը, ինչպիսիք են պաշտոնական վերկայքերի ստեղծումն ու սպասարկումը, մտում են օրակարգում:

Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի առջև կանգնած մարտահրավերները, համակարգում ակնկալվող բարեփոխումները և զարգացումները՝ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ոլորտի տեղեկատվայնացման իրականացմանը և այսպես կոչված «Էլեկտրոնային մասնակցության» ապահովմանը: Այդ նպատակով մշակվել է «Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգի» նախագիծ:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը նպաստավոր պայմաններ է ստեղծում տեղական ինքնակառավարման ոլորտի կատարելագործման, ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման, թափանցիկության և հրապարակայնության ապահովման, նրանց կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, դրանք առավել մատչելի դարձնելու, համայնքային բյուջեները և սեփականությունն առավել արդյունավետ կառավարելու, քաղաքացիների կողմից ՏԻՄ-երի գործունեությունը վերահսկելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար», - ասվում է այդ նախագծում:

Ինչպես արդեն վերն ասվել է, ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երը պարտավորված չեն համացանցային պաշտոնական կայքեր ունենալ (բացառությամբ Երևանի) և դրանք պատշաճ վիճակում պահել: Հետևաբար, չկան նաև դրանց բովանդակության, գործառնական հնարավորությունների նկատմամբ ձևավորված և հաստատված պահանջներ: Ընդհանրապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում չկա որևէ դրույթ կամ նորմ, որը ենթադրում կամ պարտադրում է ՏԻՄ-երի տեղեկատվայնացման որևէ գործընթաց, Էլեկտրոնային եղանակով տվյալների տրամադրում, համացանցի կիրառում, տեղեկատվության հրապարակում պաշտոնական համացանցային կայքերում, բացառությամբ օրենքի 12¹ հոդվածի («Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին») մի պար-

բերության («Ջնարավորության դեպքում այդ տեղեկությունը [ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը] լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով»:

Նման դրույթներ չի բովանդակում նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, միայն 7-րդ հոդվածում նշվում է, որ «սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի համացանցային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»:

Հայեցակարգի նախագծի հեղինակների դիտարկմամբ՝ գոյություն ունեցող համայնքային պաշտոնական կայքերին բնորոշ հիմնական խնդիրներն են՝ առցանց ծառայությունների բացակայությունը (սակավությունը), անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը, անհամապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ՏԻՄ-բաղաբացի արդյունավետ փոխգործակցության և մասնակցային գործիքների բացակայությունը, տեխնոլոգիական անհամապատասխանությունը նոր սարքավորումներին (Smartphone, Planshet) և այլն:

ՄԱԿ-ի հանրային կառավարման ծրագրի շրջանակներում ամեն տարի կատարվում է վերլուծություն, որի նպատակն է պարզել յուրաքանչյուր պետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածության մակարդակը: Ըստ 2010 թ. կատարված վերլուծության արդյունքների՝ ՀՀ «E-Participation» («Էլեկտրոնային մասնակցության») ինդեքսը հավասար է 0.043-ի (139-րդ տեղը 193 երկրների շարքում. համաշխարհային մակարդակով այդ ինդեքսի միջինը 0.205 է)¹³: Սա ցույց է տալիս, որ որ ՀՀ-ում գրեթե բացակայում է «Էլեկտրոնային մասնակցությունը»: ՀՀ «Էլեկտրոնային կառավարման զարգացման ինդեքսը» (E-government development index) 2012 թ. հետազոտությունների արդյունքում կազմել է 0.4997, ինչը Հայաստանին հնարավորություն է տվել 190 պետությունների

¹³ <http://www2.unpan.org/egovkb/profilecountry.aspx?ID=8>

շարքում զբաղեցնել 94-րդ տեղը (Վրաստանը՝ 72-րդ, Ադրբեջանը՝ 96-րդ, Ռուսաստանը՝ 27-րդ)¹⁴:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային ժողովրդավարության իրականացման լուրջ խոչընդոտ է մտում հանրության անիրազեկությունը տարբեր տեղեկատվական համակարգերի մասին: Մինչդեռ ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը մեծապես կախված է հիմնական շահառուների՝ համայնքի բնակիչների իրազեկության մակարդակից: «Իրականացված ուսումնասիրություններն ու հարցումները ցույց են տվել,- նշվում է հայեցակարգի նախագծում,- որ նույնիսկ այն համայնքներում, որոնք ունեն պաշտոնական համացանցային կայքեր, քաղաքացիներից քչերը գիտեն կայքի գոյության մասին կամ երբևէ օգտվել են կայքից»: Եվ բացի սուբյեկտիվ պատճառներից առկա են նաև օբյեկտիվ պատճառներ: «Համայնքները հանրային իրազեկման սահմանափակ հնարավորություններ ունեն՝ տեղեկատվական տախտակներ, տեղեկատվական թերթիկներ: Շատ քիչ համայնքներում տեղական հեռուստատեսություն կամ տեղական տպագիր մամուլ կա, որոնց միջոցով հնարավոր է արդյունավետ իրազեկում իրականացնել: Իսկ համապետական ՉԼՄ-ներով քարոզչության համար անհրաժեշտ են մեծ ֆինանսական միջոցներ: ՀՀ տարածքային կառավարման նախարարության կամ մարզպետարանների համացանցային կայքերը չեն պարունակում հղումներ համայնքային կայքերին: Բացակայում է նաև համայնքային կայքերի միասնական պորտալը», - նշվում է հայեցակարգի նախագծում:

Սակայն, հայեցակարգը մշակողների համոզմամբ, տեղական ինքնակառավարման ոլորտում «Էլեկտրոնային մասնակցության» և «Էլեկտրոնային կառավարման» խնդիրը լուծելու լուրջ նախադրյալներ են ստեղծվել: Նրանք նկատի ունեն 400 համայնքներում ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը», որը համացանցի հասանելիության պայմաններում կարող է ծառայել նաև որպես տվյալ համայնքի պաշտոնական կայք և ապահովել բազմաթիվ հնարավորություններ այցելուների և

¹⁴ <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un-dpadm/unpan048590.pdf>

հատկապես տվյալ համայնքի քաղաքացիների համար, ինչպես նաև Հայաստանում համացանցի հասանելիության մակարդակի բարձրացման և համակարգչային տեխնիկայի գների անկման պայմաններում համացանցից օգտվող քաղաքացիների թվի կտրուկ աճը:

Համացանցի միջոցով համայնքային կյանքին քաղաքացիների մասնակցության նոր հնարավորություններից են նաև սոցիալական ցանցերը: Վերջերս CNN-ի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցում առկա նորությունների և տեղեկությունների 43%-ը տարածվում են սոցիալական ցանցերի միջոցով՝ առաջին հերթին Facebook-ով, 30%-ը՝ Էլեկտրոնային փոստի, իսկ 15%-ը՝ կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով¹⁵:

Facebook-ը, որ հզոր սոցիալական ցանց է աշխարհում, դարձել է խոսքի ազատության արդյունավետ հարթակ, «վիրտուալ մի հրապարակ, որտեղ ցանկացած ոք ազատ է իր կարծիքն արտահայտելու մեջ»: Ուստի հայեցակարգի հեղինակների համոզմամբ՝ դրա հնարավորությունները պետք է օգտագործվեն նաև ՀՀ ՏԻՄ-երի և քաղաքացիների փոխհարաբերություններում: Սակայն առայժմ քիչ թվով ՀՀ ՏԻՄ-եր են Facebook-ում ստեղծել իրենց էջերը (Դիլիջան, Մեծամոր, Աշտարակ, Վեդի և այլն):

Ավագանու նիստերի դռնբաց կամ հրապարակային անցկացնելը համայնքի ակտիվ և շահագրգիռ բնակիչներին հնարավորություն է տալիս, ցանկության դեպքում, ազատորեն մասնակցելու ավագանու նիստերին, բացի հատուկ դեպքերից, երբ ավագանու որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր: Անհրաժեշտության դեպքում հենց ավագանին կարող է նախաձեռնել և նիստի հրավիրել ցանկացած քաղաքացու:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին և մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին: Սրանք օրենքում դրված այն հիմնական կառուցակարգերն են, որոնց միջոցով քաղաքացիները հնարավորություն ունեն, նախ, ավագանու անդամներից որոշակի տեղե-

¹⁵ <http://www.guardian.co.uk/media/pda/2010/oct/07/cnn-recommendation-social-news>: Հարցմանը մասնակցել են համացանցի 2000 օգտագործողներ:

կատվություններ ստանալու ավագանու գործունեության մասին, և երկրորդ՝ բարձրացնելու համայնքի կառավարմանը և զարգացմանը վերաբերող ցանկացած հարց:

Ընդհանրապես համայնքի ավագանու նախաձեռնությունը և համայնքի համար կարևորագույն հարցերի վերաբերյալ տեղական հանրաքվեի նշանակումը պետք է դիտարկել որպես քաղաքացիների մասնակցության ակտիվ ձև: Հայաստանում տեղական հանրաքվեների նշանակումը և անցկացումը կատարվում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունի նաև համայնքի բնակիչներից ձևավորված նախաձեռնող խումբը), սակայն ՀՀ համայնքներում առայսօր տեղական հանրաքվեներ չեն անցկացվել: Համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրա մասնակցությունն ապահովում է համայնքի ղեկավարի աշխատակազմը, որի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը:

Վերջինս, քաղաքացիների հետ հարաբերությունների շրջանակներում, ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը, կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, ինչպես նաև հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ: Փաստորեն, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը տեղական իշխանության այն պաշտոնատար անձն է, որը պատասխանատու է ՏԻՄ-երի՝ քաղաքացիների հետ հարաբերությունների պատշաճ կազմակերպման և ապահովման համար: Նույնպիսի լիազորություններով օժտված է նաև Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

Համայնքի ղեկավարը պարտավոր է իր ընդունած որոշումները երկօրյա ժամկետում ոչ միայն ուղարկել համայնքի ավագանու անդամներին, այլև փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում՝ քաղաքացիներին հնարավորություն տալով տեղեկանալու համայնքի ղեկավարի գործունեության մասին:

Օրենքում կան նաև այնպիսի դրույթներ, որոնք պարտադրում են համայնքի ղեկավարին թե՛ իրազեկել քաղաքացիներին և թե՛ մասնակից դարձնել համայնքային կարևոր իրադարձություններին: Այսպես, համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի բնակչությանը իրազեկել միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին և ներգրավել նրանց այդ նպատակով որոշումների կայացման գործընթացներում: Դա կյանքի կոչելու նպատակով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13-14-րդ հոդվածների դրույթներին համապատասխան, ՀՀ կառավարությունը 1998 թ. հոկտեմբերի 28-ի հ. 660 որոշմամբ սահմանել է կենսագործունեության միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը՝ ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրազեկման պատասխանատվությունը դնելով ՏԻՄ-երի վրա:

Մասնակցության յուրահատուկ ձև կարելի է համարել քաղաքացիներին համայնքի տարածքում կազմակերպվող վճարովի հասարակական տարբեր աշխատանքներում և ծրագրերում ներգրավելու հնարավորության ընձեռումը: Օրենքը քաղաքացիներին, գործարար անձանց և կազմակերպություններին նաև հնարավորություն է տալիս, ցանկության դեպքում, հանդես բերել ակտիվություն և իրենց ներդրումն ունենալ (բարեգործական հատկացումների, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունների տեսքով) համայնքի սեփականության ավելացման և տեղական ինդիքների լուծման գործում:

Քաղաքացիների մասնակցության ակտիվ ձևերից է Երևանի քաղաքապետին օրենքով վերապահված լիազորությունը, այն է՝ առաջարկություն ներկայացնել ավագանուն վարչական շրջանի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդ ձևավորելու մասին: Երևանի քաղաքապետին վերապահված են նաև մի շարք կամավոր լիազորություններ, օրինակ՝ համագործակցություն ծավալել Երևանի տարածքում գործող մշակութային, առողջապահական, մարզական, ֆիզիկական կուլ-

տուրայի, բնապահպանական, սոցիալական պաշտպանության և այլ ծրագրեր իրականացնող հասարակական ու կրոնական կազմակերպությունների հետ:

Տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրությունում բավական մանրամասն անդրադարձ կա համայնքի զարգացման քառամյա և տարեկան ծրագրերի և բյուջեների, ինչպես նաև դրանց կատարման եռամսյա և տարեկան հաշվետվությունների թափանցիկության և հրապարակայնության ապահովմանը: Օրենքներում հստակ ամրագրված է, որ համայնքի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող այդ հիմնարար փաստաթղթերը պարտադիր կերպով պետք է հրապարակվեն համայնքային լրատվամիջոցներում և համացանցային կայքերում, ինչպես նաև համայնքի բնակչության համար դրանք առավել մատչելի դարձնելու համար պետք է պատրաստվեն և հրատարակվեն դրանց վերաբերյալ հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

Ավագանու և համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերը պաշտոնապես հրապարակվում են «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում» կամ «Երևանի իրավական ակտերի տեղեկագրում»: Քաղաքային և գյուղական համայնքների ՏԻՄ-երի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը կարող են հրապարակվել նաև համայնքի տարածքի տարբեր վայրերում այդ նպատակով նախատեսված ցուցատախտակներին փակցնելու միջոցով: Բացի դրանից, յուրաքանչյուր եռամսյակ, ՀՀ արդարադատության նախարարությունը (պետական բյուջեի միջոցների հաշվին) հրատարակում է քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուներ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը պարունակում է նաև համայնքի իրավական ակտի նախագիծ մշակելուն քաղաքացիների մասնակցության որոշ ակտիվ ձևեր: Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի աշխատակիցների ու մասնագետների թվից կարող է ստեղծել նախագծի մշակման հանձնաժողով, որի աշխատանքներում կարող են ներգրավվել նաև գիտական կազմակերպություն-

Ների, շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ: Համայնքի ղեկավարն իրավասու է նաև հայտարարել համայնքի իրավական ակտի լավագույն նախագծի մրցույթ:

Այդպիսի ակտերի նախագծեր իրավունք ունեն մշակել և համայնքի ղեկավարին ներկայացնել նաև համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ իրենց նախաձեռնությամբ: Դրանք մշակողներն իրավունք ունեն մասնակցելու ՏԻՄ-երի կազմակերպած քննարկումներին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, եթե մինչև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 2013 թ. փոփոխությունները մասնակցային կառավարման պասիվ ձևերին վերաբերող դրույթները զգալիորեն գերակշռում էին ակտիվ ձևերին առնչվողներին, ապա այժմ ծանրության կենտրոնը զգալիորեն թեքվել է դեպի վերջիններիս կողմը: Եթե առաջինները համայնքի քաղաքացիների և հասարակական սուբյեկտների համար հիմնականում ապահովում են բավարար հնարավորություններ՝ տեղեկանալու համայնքի խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ ՏԻՄ-երի ծավալած գործունեության մասին, ապա երկրորդներն այժմ հնարավորություններ են ապահովում քաղաքացիների համար՝ ներգրավվելու և իրենց մասնակցությունը բերելու համայնքում արդյունավետ տեղական ինքնակառավարում իրականացնելու գործում:

ՎԱՐԺԱՆՔ

Համայնքի կառավարման դրական փորձի վերհանում

Վարժանքի նպատակը

- Ցուցադրել կոնկրետ օրինակներով համայնքի դրական փորձի սմուլներ:
- Վեր հանել ինքնակառավարման մարմինների գործունեության ընթացքում ծագող խոչընդոտներն ու դժվարությունները:
- Պարզաբանել դրանց հաղթահարման ուղիները:

Վարժանքի անցկացում

Բաժանեք մասնակիցներին խմբերի: Ցուրաբանյուր խումբ իր համայնքի փորձով պետք է բերի համայնքի կառավարմանը

մասնակցելու օրինակներ (մեկ կամ մի քանի): Եթե խմբում կան ավագանու անդամներ կամ համայնքի ղեկավարներ, ցանկալի է, որ նրանք հանդես գան որպես փորձագետներ և ներկայացման ընթացքում որոշեն մասնակցության ձևը՝ պասիվ է, թե՛ ակտիվ: Հնարավորություն տվեք, որ նրանք հանդես գան մեկնաբանություններով, օրինակներ բերեն իրենց փորձից: Դա հատկապես շատ օգտակար է այն մարդկանց համար, որոնք դեռևս փորձ չունեն:

Վարժանքի ամփոփում

Փորձեք ներկայացումներից հետո քննարկում կազմակերպել մասնակցային ժողովրդավարության արդյունավետության վերաբերյալ՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ինչ խոչընդոտներ կան այդ ճանապարհին,
- Ինչպե՞ս կարելի է դրանք հաղթահարել,
- հաջողության հասնելու համար ի՞նչ է անհրաժեշտ փոխել օրենսդրության մեջ կամ գործնական կյանքում:

Հնարավոր է, որ քննարկման ժամանակ լինեն նաև հոռետեսական կարծիքներ: Անհրաժեշտ է ունենալ դրական փորձի մի քանի օրինակներ, որոնք կօգնեն համոզելու մասնակիցներին, որ դրական փոփոխությունները հնարավոր են:

3.2 Համայնքի կառավարմանը քաղաքացիների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում և միջազգային փորձը

Հայաստանում անցած տարիներին համայնքի կառավարմանը քաղաքացիների մասնակցության որոշ փորձ է ձեռք բերվել: Առաջին ծրագրերն իրականացվել են Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների կամ արտասահմանյան կազմակերպությունների կողմից աջակցություն ստացող տեղական կազմակերպությունների կողմից: Դրանց թվում էին ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, «Վորլդ Վիժն» «Փրկեք Երեխաներին», «Օքսֆամ» կազմակերպությունների հայաստանյան գրասենյակները, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը, Համայնքների ֆինանսիստների միավորում (ՀՖՄ) ՀԿ-ն և այլ կազմակերպություններ:

2007 թ. Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ՄՉՄԿ) ՅԿ-ն իրականացրեց «Ես մասն եմ համայնքի» ծրագիրը, որը նվիրված էր համայնքի բյուջեի ընդունման և կատարման մասնակցային մոդելի ներդրմանը Հայաստանի 10 մարզերի 10 համայնքներում (Ռինդ, Մարգահովիտ, Հացիկ, Աչաջուր, Սարուխան, Աշտարակ, Նոր Խարբերդ, Արևիկ, Աշոտավան, Արզական): Այստեղ հիմնական շեշտը դրվել էր այդ համայնքների ՅԿ-ների ներկայացուցիչների վերապատրաստման վրա, որոնք հետագայում կկարողանան շարունակել այդ գործը: Բնակիչներն ակտիվորեն մասնակցել են կազմակերպված համայնքային քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքները և հանդես եկել առաջարկություններով: ՄՉՄԿ-ի հետագա դիտարկումները ցույց են տվել, որ ՏԻՄ-երը համայնքի բյուջեն ընդունելու գործընթացում հիմնականում հաշվի են առել համայնքային քննարկման արդյունքները:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Տեղական ինքնակառավարման ծրագրի 3-րդ փուլի (ՏԻՃ 3) ֆինանսական կառավարման բաղադրիչի շրջանակներում 2007-2010 թթ. ընթացքում Հայաստանի քաղաքային համայնքներին ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն՝ մշակելու, քննարկելու և հաստատելու այդ համայնքների զարգացման բառամյա ծրագրերը կամ տարեկան բյուջեները՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ և մասնակցային ձևերի կիրառմամբ: Այդ նպատակով նախօրոք մշակվել և ծրագրային քաղաքների քաղաքապետարաններին են տրամադրվել համապատասխան փաստաթղթերի նախագծերի կազմման նմուշներ, Ժամանակացույցներ, ծրագրային և բյուջետային հայտերի ձևեր և այլն: Համաձայն այդ տեխնիկական աջակցության ընթացակարգի՝ համայնքի զարգացման բառամյա ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերի մշակման և քննարկման գործընթացներն արդյունավետ կազմակերպելու համար համայնքի ղեկավարի որոշմամբ կամ կարգադրությամբ համայնքում ստեղծվել է պլանավորման ժամանակավոր հանձնաժողով՝ համայնքի ավագանու մի քանի անդամների, համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետների, հասարակական և մասնավոր հատվածների շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և ակտիվ քաղաքացիների ընդգրկմամբ, հաստատ-

վել է այդ հանձնաժողովի գործունեության ժամանակացույցը: Պլանավորման հանձնաժողովը, իր աշխատանքի ընթացքում սերտ համագործակցելով քաղաքապետարանի բաժինների ու համայնքային կազմակերպությունների պատասխանատու աշխատողների և համայնքի շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, կազմել է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և բյուջեի նախնական նախագիծը: Այդ նախագիծը (նախագծերը) համայնքի հանրությանը ներկայացնելու և դիտողություններ ու առաջարկություններ ստանալու նպատակով պլանավորման հանձնաժողովը համայնքում կազմակերպել և անցկացրել է հանրային հանդիպումներ կամ լսումներ՝ ամբողջ համայնքում տարածելով տեղեկություններ հանդիպման տեղի, ժամանակի և օրակարգի վերաբերյալ: Համայնքի բյուջեի նախագիծը հանրությանն ավելի մատչելի ներկայացնելու համար նաև պատրաստվել և հանդիպման մասնակիցներին է բաժանվել բյուջեի հակիրճ նախագիծը, որի նմուշը ևս մշակվել և քաղաքապետարաններին է տրամադրվել ՏԻԾ 3-ի կողմից: Հանրային հանդիպման ժամանակ ծավալված քննարկումների, բարձրացված հարցերի և արված առաջարկությունների հիման վրա պլանավորման հանձնաժողովը կազմել է քառամյա ծրագրի և բյուջեի վերջնական նախագիծը և ներկայացրել համայնքի ղեկավարին: Վերջինս, օրենքով սահմանված կարգով, այդ նախագիծը ներկայացրել է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: Նախագծի ընդունման համար հրավիրված ավագանու նիստն անցկացվել է հրապարակային, և համայնքի շահագրգիռ հանրությունը մասնակցել է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և բյուջեի քննարկմանը: Համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի հաստատումից հետո ժամանակավոր հանձնաժողովը դադարեցրել է իր գործունեությունը:

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի և Նիդեռլանդների քաղաքապետարանների միջազգային ընկերակցության իրականացրած «Հաղորդակցության բարելավումը Հայաստանի համայնքներում» ծրագրի¹⁶ շրջանակներում (2008 - 2011թթ.) անցկացվել են հաղորդակցության ու հանրային մասնակցության

¹⁶ Ծրագիրը ֆինանսավորվել է Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության ՄԱՏՐԱ ծրագրի կողմից :

թեմաներով բազմափուլ դասընթացներ Հայաստանի 13 քաղաքների տեղական իշխանության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների և տեղական հեռուստաընկերությունների աշխատակիցների համար: Երկու քաղաքներում՝ Գորիսում և Սևանում, իրականացվել են պիլոտային ծրագրեր՝ ուղղված տեղական իշխանությունների հաղորդակցական կարողությունների բարելավմանն ու մասնակցային կառավարման տարրերի ներդրմանը:

2010 թ. հոկտեմբերից «Քաունթերփարթ Ինթերնեշնլը» ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՉԳ) աջակցությամբ իրականացնում է «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագիրը»: Այն ընդգրկում է Հայաստանի բոլոր 10 մարզերի 43 համայնքներ, որտեղ հարյուրավոր ծրագրեր են իրականացվել՝ ուղղված համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, համայնքային ենթակառուցվածքների վերականգնմանը, համայնքի մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքի խթանմանը, համայնքի համախմբմանը և երիտասարդության ակտիվ ներգրավվածությանը:

Այդ ծրագրերի պարագայում կարևորվում է ոչ միայն համայնքային այս կամ այն հիմնախնդրի լուծումը, այլ դրա շուրջ համայնքի համախմբումը, կամավոր աշխատանքով սեփական համայնքի հզորացմանն աջակցելու գիտակցումը, համայնքներում խնդիրների լուծման մասնակցային մշակույթի ձևավորումը: Ծրագիրը զուգահեռաբար զարգացնում է և՛ տեղական ինքնակառավարման մարմինների, և՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունները՝ միաժամանակ ստեղծելով մեխանիզմներ, որպեսզի նրանք աշխատեն համատեղ:

Բարձր է գնահատվել հատկապես «Քաունթերփարթի» աջակցությունը և տեխնիկական օժանդակությունը Սյունիքի մարզում հարկերի հավաքման և թափանցիկության մեծացման նորարարական մոտեցման համար: Այդ մոդելը մշակել է Սիսիանի միջհամայնքային միությունը, որը 31 համայնքների խմբավորում է հարկերի հավաքումը կազմակերպելու և քաղաքացիներին հարկերի մասին տեղեկացնելու համար: Դրա շնորհիվ յուրաքանչյուր համայնք հնարավորություն ունի մուտք ունենալու ցանց, վճարելու

հարկերը՝ առանց մեկնելու միջհամայնքային միության կենտրոն: Բացի այդ, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը հնարավորություն ունի հետևելու գործընթացին, տեղեկություն ստանալու հավաքման գործընթացի և առկա խնդիրների մասին:

Եվրոպայի խորհուրդը բազմիցս անդրադարձել է մասնակցային ժողովրդավարության հարցին և ընդունել է համապատասխան համաձայնագրեր, որոշումներ և հանձնարարականներ, որոնք ուղեկիշ են իր անդամ երկրների համար: Մասնավորապես, այդպիսի փաստաթղթերից են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (1985), «Տեղական ժողովրդավարության մասին» թ.15 որոշումը (1995), Հանրային կյանքին մասնակցության և պատասխանատու քաղաքացիության մասին» թ. 91 որոշումը (2000), Հասարակական կազմակերպությունների և տեղական ու տարածաշրջանային ժողովրդավարության մասին» թ.139 հանձնարարականը (2003), Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Տեղական և տարածաշրջանային հանրային ծառայությունների մասին» Rec(2007)4, «Տեղական և տարածաշրջանային մակարդակներում կարողությունների հզորացման մասին» Rec(2007)12, «Տեղական և տարածաշրջանային մակարդակում մասնակցության և մասնակցության քաղաքականության գնահատման, աուդիտի և մոնիթորինգի մասին» Rec (2009)2 հանձնարարականները և այլն:

Հայաստանը, որպես Եվրոպայի խորհրդի և Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության ծրագրերի անդամ երկիր, հնարավորություն ունի օգտվելու ինչպես վերը նշված փաստաթղթերից, այնպես էլ առանձին երկրների առաջավոր փորձից: Առկա գրականության մեջ բավական մանրամասն մեկնաբանված է, օրինակ, Իսպանիայում և Դանիայում կուտակված փորձը¹⁷:

Ուշագրավ է, օրինակ, Իսպանիայի փոքր՝ մինչև 100 բնակիչ ունեցող համայնքների ինքնակազմակերպվելու փորձը: Համայնքի բնակիչները որոշակի պարբերականությամբ (առնվազն երեք ամիսը մեկ անգամ) համայնքի ղեկավարի հրավերով հավաքվում են հատուկ

¹⁷ Տե՛ս Թումանյան Դ., Շահբաջյան Վ. Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում. Ինչու և ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը: Ձեռնարկ: Եր., 2011, էջ 83-94:

Նշանակված տեղում, քննարկում ու քվեարկում են համայնքին վերաբերող ցանկացած հարց: Սա տեղական ինքնակառավարման ամենաժողովրդավարական և թափանցիկ ձևն է Իսպանիայում:

Իսպանիայում անցկացվում են նաև հանրային լսումներ հանրային հետաքրքրության որոշակի հարցերի վերաբերյալ, ինչը օրենսդրական պահանջ է: Սա հատկապես վերաբերում է համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելուն: Ամեն անգամ, երբ տեղական իշխանությունները ցանկանում են փոփոխություններ կատարել համայնքի գլխավոր հատակագծում, նրանք պետք է հրավիրեն և անցկացնեն 30-օրյա հանրային լսումներ, որոնցում պետք է ընդգրկված լինեն համայնքի հնարավորինս շատ քաղաքացիներ: Տեղական իշխանությունները պարտավոր են հավաքել և խմբավորել քաղաքացիներից ստացված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև հիմնավորել այս կամ այն դիտողությունը և առաջարկությունը չընդունելը կամ անտեսելը: Այս գործընթացների օրինականությունն ու հաջորդականությունը չպահպանելը կարող է հանգեցնել ընդհուպ մինչև համայնքի խորհրդի կողմից կայացրած վերջնական որոշման անվավեր համարվելուն¹⁸:

Տեղական ժողովրդավարության իրականացման հաջողված նոր ձևերից է մասնակցային խորհրդատվական հանձնաժողովը (ՄԽՅ), որի արդյունավտությունը խորությամբ ուսումնասիրվել է Դանիայում: Բանն այն է, որ 2007 թ. Դանիայում իրականացվեց համայնքների խոշորացում, որի արդյունքում համայնքների թիվը 275-ից դարձավ 98: Հասարակության մեջ մտավախություն կար, որ խոշորացման հետևանքով էապես կնվազի քաղաքացիների մասնակցությունը տեղական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Այդ իսկ պատճառով Դանիայի կառավարությունը և այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները ստեղծեցին փորձագետների մի խումբ, որի առաջադրանքն էր ներկայացնել նոր խոշորացված համայնքներում տեղական ժողովրդավարության իրականացման նոր մոդելներ և եղանակներ՝ հիմնվելով այդ ասպարեզում կուտակված փորձի վրա: Ուսումնասիրության համար

¹⁸ Նույն տեղում, էջ 86:

ընտրվել են Սիլկեբորգ և Հոլբակ համայնքները, որոնցում կիրառվում են իրարից տարբեր երկու ինստիտուցիոնալ մոտեցումներ: Առաջին դեպքում օգտագործվում են բնակիչների ներգրավման ավանդական մեթոդները, մասնավորապես՝ տեղական (թաղային) խորհուրդները, և շեշտը դրվում է տարբեր մակարդակների միջև փոխհարաբերությունների վրա: Երկրորդ դեպքում օգտագործվում է անմիջական կապը համայնքի ներկայացուցչական ինստիտուտների հետ, ինչպես նաև հանրային ծառայություններ մատուցողների հետ:

Հոլբակի ՄԽՀ-ներում, ի տարբերություն Դանիայում գործող այլ նմանատիպ հանձնաժողովների, առկա է առնվազն երկու առանձնահատկություն, որոնք իրենց էությունը սորորարական են: Այստեղ հանձնաժողովի անդամ են նաև համայնքում հանրային ծառայություններ մատուցող հաստատությունների (տարրական դպրոցներ, մասնավոր բուժկետեր) ներկայացուցիչները: Վերջիններս պարտավոր են մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Այս մոտեցումը նպատակ ունի միավորել տեղական հանրային ծառայությունների մատուցումը հասարակության մասնավոր և կամավոր հատվածների հետ: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ ՄԽՀ-ները տեղական իշխանությունների հետ բավական սերտ կապերի մեջ են, ինչը հիմնված է փոխհամաձայնեցված մեխանիզմների վրա: Մասնավորապես, համայնքի խորհուրդը պարտավոր է խորհրդակցել համապատասխան ՄԽՀ-ի հետ, եթե առաջացած խնդիրն առնչվում է այդ տարածքին: Այդ փոխհարաբերություններն առարկայանում են տարեկան երկու անգամ կազմակերպվող հանդիպումների ժամանակ: Եթե ՄԽՀ-ն նոր խնդիր է արձանագրում, ապա այն քննարկվում է ներքին ընթացակարգով և ներկայացվում է համայնքի խորհրդին: Դրանից հետո հարցը քննարկվում է համայնքի խորհրդի նիստում, և վերջնական որոշումը կայացնում է համայնքի խորհուրդը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Դանիայի նշված երկու համայնքներում գործող մասնակցային ժողովրդավարության երկու մոդելները, ունենալով որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ հիմնված են երեք ընդհանուր չափանիշների վրա՝ հասանելիություն, հանրային քննարկում և հաշվետվողականություն¹⁹:

¹⁹ Նույն տեղում, էջ 94:

IV ԳԼՈՒԽ

ՉՈՒԳԱԿՇՈՎԱԾ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.
ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ

ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

4.1. Չուզակշռված ժողովրդավարություն. կանանց և տղամարդկանց հավասարություն: Գենդերը որպես սոցիալ-մշակութային հարացույց. գենդերային կարծրատիպեր, գենդերային նորմեր և գենդերային դերեր

Չուզակշռված ժողովրդավարության հայեցակարգը մշակվել է Եվրոպայի խորհրդում 1990-ական թթ.²⁰: Այդ հայեցակարգում ներառված են գաղափարներ, որոնք այդ տարիներին լայնորեն քննարկվում էին արևմտաեվրոպական կանանց կազմակերպությունների կողմից: Նրանք պահանջում էին իրենց կառավարություններից և Եվրոպական համաձայնության ղեկավար մարմիններից որոշակի միջոցներ ձեռնարկել իշխանության մարմիններում կանանց իրական հավասարության հասնելու համար: Այդ շրջանում գլխավոր կարգախոսը զուգակշռությունը կամ հավասարակշռությունն էր՝ կանանց և տղամարդկանց 50/50 հարաբերակցությամբ ներկայացվածությունը իշխանության կառույցներում:

Չուզակշռված ժողովրդավարության հայեցակարգը մշակողներն իրենց դիրքորոշումը փաստարկում էին հետևյալ կերպ. մարդկությունը բաղկացած է տղամարդկանցից և կանանցից, որոնք հավասար արժանիքներ ու կարողություններ ունեն: Ճշմարիտ ժողովրդավարություն կարող է լինել միայն այն դեպքում, եթե մարդիկ ընդունվում են այնպիսին, ինչպիսին կան իրականում, ոչ թե որպես վերացական, անսեռ արարած, այլ որպես տղամարդ և կին, որոնցից յուրաքանչյուրը կարող է յուրովի օգտակար լինել հասարակությանը: Նրանք ապացուցում էին, որ ժողովրդավարությունը ենթադրում է կանանց լիարժեք մասնակցություն՝ տղամարդկանց հետ հավասար հիմունքով, հասարակության գործառույթի բոլոր մակարդակներում և բոլոր ոլորտներում: Յուրաքանչյուր սեռի մասնակցությունը կառավարման մարմիններում պետք է իրակա-

²⁰ Չուզակշռված ժողովրդավարություն հասկացությունն առաջին անգամ քննարկվել է «Չուզակշռված ժողովրդավարություն. Եվրոպայի խորհրդի գործունեության 40 տարին» (Ստրասբուրգ, 6-7 նոյեմբերի 1989 թ.) սեմինարի շրջանակներում: Այդ սեմինարին հետևեց ԵՄ Տղամարդկանց և կանանց հավասարության հարցերի կոմիտեի և Մարդու իրավունքների դեպարտամենտի կողմից պատրաստված հայեցակարգը, որը ներկայացվեց 1994 թ. Վիեննայում՝ Եվրոպայում կանանց դրությանը նվիրված խորհրդակցությունում:

Նացվի հավասարության հիման վրա, ընդ որում նպատակը պիտի լինի 50/50 հարաբերակցության հասնելը:

Չուզակչռված ժողովրդավարության կողմնակիցների համոզմամբ՝ դրա հաստատման արդյունքում հասարակության կայուն զարգացման իրական հիմք կստեղծվի: Կանայք հնարավորություն կստանան տղամարդկանց հավասար իրենց ներդրումն ունենալու հասարակության զարգացման գործերում՝ տնտեսության, քաղաքականության, մշակույթի մեջ:

Արևմտաեվրոպական որոշ պետություններ (հատկապես՝ սկանդինավյան երկրները) ընդհուպ մոտեցել են զուգակչռված ժողովրդավարությանը:

Չուզակչռված ժողովրդավարության հիմքում, փաստորեն, գենդերային հավասարության գաղափարն է, որն առհասարակ ժողովրդավարության հիմնաքարերից ու կայուն զարգացման գրավականներից է, և որի ձեռքբերմանն է ձգտում այսօր առաջադեմ մարդկությունը:

«Գենդեր» հասկացությունը սկսել է գործածության մեջ մտնել XX դարի կեսերից, և այսօր մեծ թվով իրողություններ բնորոշվում են «գենդերային» մակդիրով: «Գենդեր» (gender) եզրույթը, որ փոխառնվել է անգլերեն քերականությունից, կիրառելի է այն դեպքերում, երբ խոսքը տղամարդու և կնոջ մասին է ոչ որպես կենսաբանական էակի, այլ՝ սոցիալական կամ հասարակական:

Երկուսն էլ՝ թե՛ կենսաբանական սեռը (sex), թե՛ գենդերը, վերաբերում են տղամարդու և կնոջ առանձնահատկություններին, բայց տարբեր տեսանկյուններից: Գենդերը, ի տարբերություն կենսաբանական սեռի, կերտվում է հասարակական պրակտիկայի ընթացքում (մարդը ծնված օրից «սովորում» է կին կամ տղամարդ լինել) և պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանով ու տվյալ հասարակության սոցիալ-մշակութային առանձնահատկություններով, նայած թե ինչպիսին են տվյալ հասարակությունում «իսկական կնոջ» և «իսկական տղամարդու» պատկերացումները:

ՎԱՐԺԱՆՔ

**Գենդերային կարծրատիպեր
Վարժանքի նպատակը**

- Ցույց տալ, որ շատ քիչ են միայն կանանց կամ միայն տղամարդկանց վերագրվող հատկանիշները:
- Ցուցադրել, որ առանձնահատուկ հատկանիշներն ավելի շատ կապված են կենսաբանական սեռի, վերարտադրական գործառույթների հետ:
- Ձևավորել ըմբռնում, որ կանանց կամ տղամարդկանց վերագրվող հատկանիշների մեծ մասը գենդերային սոցիալականացման հետևանք է և կապվում է գենդերային կարծրատիպերի հետ:

Վարժանքի անցկացում

Մասնակիցներին բաժանեք 2 գույնի թղթեր: Մեկ գույնի թղթի վրա գրվում են կանանց հատկանիշները, մյուսի՝ տղամարդկանցը: Այնուհետև պատահառը բաժանեք երեք մասի: Այն հատկանիշները, որոնք հատուկ են և՛ կանանց, և՛ տղամարդկանց կփակցվեն մեջտեղում:

Կին	հատկանիշներ, որոնք վերաբերում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց	տղամարդ

Վարժանքի ամփոփում

Գենդերային կարծրատիպեր, գենդերային նորմեր և դերեր

Գենդերային կարծրատիպերը մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն, ընդհանրացված պատկերացումներ են կանանց և տղամարդկանց կերպարի և վարքի վերաբերյալ: Դրանք մատուցվում են որպես ստուգված ճշմարտություն և յուրացվում շատ ավելի վաղ, քան երևան է գալիս սեփական կարծիքը:

Գեղեցիկային կարծրատիպերը տարբեր հասարակություններում, տարբեր մշակույթներում կարող են տարբեր լինել և տարբեր ժամանակներում ու պայմաններում փոփոխվել: Դրանք հիմնականում սոցիալական բնույթ ունեն և հասարակության տարբեր շերտերի համար էլ կարող են տարբեր լինել՝ կախված նրանց կյանքի պայմաններից, կրթությունից, տարիքից, կյանքական վիճակից: Սակայն կան նաև ընդհանրական գեղեցիկային կարծրատիպեր, որոնք բնորոշ են բոլոր հասարակություններին՝ անկախ տվյալ երկրի աշխարհագրական դիրքից, մշակույթից, ազգային և կրոնական պատկանելությունից:

Կարևոր է նկատի ունենալ նաև, որ բոլոր հասարակություններում և բոլոր ժամանակշրջաններում գեղեցիկային կարծրատիպերը հիմնականում հենվել են հակադրությունների վրա՝ ակտիվություն-պասիվություն, ուժ - թուլություն, իշխանություն - ենթակայություն, տրամաբանություն - ինտուիցիա, անկախություն - կախվածություն: Ընդամին առաջինները վերագրվել են տղամարդկանց, մյուսները՝ կանանց:

Սակայն գեղեցիկային կարծրատիպերի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք շատ զորավոր են, քանի որ ընդունվում են անվերապահորեն, որպես ճշմարտություն, կիրառվում են որպես սոցիալականացման գործիք սոցիալականացման հիմնական գործակալների՝ ծնողների, դաստիարակների, մանկավարժների, հեղինակությունների կողմից, այնուհետև՝ քարոզչության ամենահզոր խողովակներով՝ զանգվածային լրատվամիջոցներով, արմատանում մարդկանց գիտակցության մեջ, հետևաբար կայուն են: Ուստի դրանք փոփոխելու համար երկար ժամանակ և համար, հետևողական աշխատանք է պահանջվում:

Ըստ այդ պատկերացումների, որոնք տվյալ հասարակության կուլտակած պատմական փորձի ու ավանդույթների արդյունք են, ձևավորվում են գեղեցիկային նորմեր՝ տղամարդուն և կնոջը թելադրվող վարքականոններ: Եվ այդ նորմերով են առաջնորդվում կանայք ու տղամարդիկ միմյանց ու հասարակության հետ հարաբերվելիս, իրենց վերապահված սոցիալական դերերը կատարելիս: Այլ

կերպ ասած՝ այդ գեղերային նորմերի հիման վրա են ձևավորվում գեղերային դերերը՝ տղամարդու և կնոջ վարքի մոդելները:

Այդ նորմերը, անշուշտ, տարբեր նշանակություն ունեն մարդու կյանքում, տարբեր կերպ են թելադրվում կամ պարտադրվում և տարբեր կերպ են ազդում մարդու վարքագծի վրա: Ըստ այդմ՝ դասակարգվում են երկու տեսակի՝ սովորութային-մշակութային և իրավական:

Իրավական նորմերն ընկած են գործող օրենքների հիմքում և պարտադիր են տվյալ երկրի բոլոր քաղաքացիների համար, դրանք խախտելու դեպքում մարդը ենթարկվում է պատասխանատվության: Իսկ մշակութային նորմերն ընկած են տվյալ ժողովրդի կրոնի, սովորույթների, ավանդույթների և արժեհամակարգի հիմքում: Դրանց խախտումը օրենքի առջև պատասխանատվության չի հանգեցնում, բայց հասարակության վերաբերմունքի և սեփական դիրքի ու կարգավիճակի փոփոխության պատճառ է դառնում, նայած, թե որքանով է այդ խախտումը արդարացնում հասարակության սպասուժները կամ ընդհակառակը՝ հուսախաբ անում:

Գեղերային նորմերն էլ, իրենց հերթին, բազմազան և փոփոխական են: Ինչպես արդեն ասվեց, դրանք մշակվում են դարերի ընթացքում, մարդկային փոխհարաբերությունների փորձի արդյունքում, ըստ տվյալ ժողովրդի հոգեկերտվածքի, հավատալիքների և դավանած արժեքների: Հետևաբար միշտ չէ, որ դրանք հաստատուն կամ անքննելի ճշմարտություններ են, քանի որ դրանց հիմքում ընկած են մարդկանց ընկալումները: Դրանց վրա կարող են ազդել ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ նախադրյալներ, որոնց աղբյուրը երբեմն ոչ թե ստուգված գիտելիքն է, այլ նախապաշարումը, կանխակալ կարծիքը կամ ընդամենը տպավորությունը, որ կարող է նաև թյուր լինել: Եվ պայմանավորված հասարակության մեջ տվյալ կարծիքն արտահայտողի հեղինակությունից և տարածման շահավորից, այն կարող է ընդունվել որպես ճշմարտություն, այլ կերպ ասած՝ կարծրատիպի նշանակությունն ձեռք բերել և պայմանավորել այս կամ այն գեղերային նորմի սահմանումը:

4.2. Գեներային իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանը, սկսած 1993 թվականից, վավերացնելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, 1995 թ. ստորագրելով Պեկինի գործողությունների ծրագիրը, հետագայում ընդունելով ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մի շարք այլ փաստաթղթեր, այդ իրավունքների և հնարավորությունների ապահովման պարտավորություններ է ստանձնել:

Անցած տարիներին Հայաստանի Հանրապետության գեներային քաղաքականությունը կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում ուղղված է եղել կառավարման համակարգում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովմանը, կանանց հնարավորությունների ընդլայնմանը իշխանության կառույցների որոշումների ընդունման մակարդակում ժողովրդավարացման և պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով: «ՀՀ կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» համաձայն ձեռնարկված միջոցները նախադրյալներ են ստեղծել կառավարման ոլորտում կանանց ներկայացվածության ընդլայնման համար:

2010 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայեցակարգ գեներային քաղաքականության» փաստաթուղթը, որով նախատեսվում է «ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում՝ ՀՀ Ազգային ժողովում, կանանց ներկայացվածությունը 15%-ից մինչև 30%-ի, գործադիր իշխանության քաղաքական և հայեցողական պաշտոններում՝ 25%-ի, քաղաքացիական ծառայողների բարձրագույն և գլխավոր պաշտոններում՝ 30%-ի և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ 25%-ի հասցնելու համար հատուկ ժամանակավոր միջոցների ձեռնարկում»: Հայեցակարգի հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության գեներային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»:

Հազարամյակի զարգացման նպատակների կատարման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է մինչև 2015 թվականը ապահովել ՀՀ օրենսդիր մարմնի կազմում կին պատգամավորների առկազն 25%-ի մասնաբաժին, իսկ համայնքների ղեկավարի պաշտոնում՝ 10%-ի:

«Եվրոպական հարևանության քաղաքականություն. Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն» գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկում²¹ գերակա խնդիրների և առաջնահերթ միջոցառումների թվում նախատեսվել է շարունակել գենդերային հավասարության մասին իրավական ակտերի լրամշակման և օրենսդրության կատարելագործման գործընթացը (կետ 53.Բ.30): Մասնավորապես նախատեսվում էր 2009 թ. ընդունել Գենդերային հավասարության մասին հայեցակարգը, իսկ 2010-2011 թթ. իրականացնել այդ հայեցակարգով նախատեսված իրավական ոլորտի բարեփոխումներին ուղղված միջոցառումներ, 2010 թ. ընդունել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» և «Ընտանեկան բնության մասին» ՀՀ օրենքներ և 2011 թ. ընդունել այդ օրենքների կիրարկումն ապահովող իրավական ակտեր:

ՀՀ Ազգային ժողովը 2013 թ. մայիսի 20-ին ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Թեպետ որոշ դրական միտումներ նկատվում են, մինչ օրս որոշումների ընդունման բոլոր մակարդակներում սեռերի անհավասարակշիռ ներկայացվածությունը մտում է ժողովրդավարության կայացման ճանապարհին ընկած լուրջ խոչընդոտներից մեկը: Գենդերային հավասարության ապահովմանն ուղղված քա-

²¹ 2004 թ. հունիսին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում: Այդպիսով Հայաստանը գործընկեր և համագործակցող կարգավիճակ ունեցող երկրից դարձավ ԵՄ հարևան երկիր: 2006 թ. նոյեմբերի 14-ին հաստատվեց և ստորագրվեց ՀՀ-ԵՄ համատեղ գործողությունների ծրագիրը: 2009 թ. մայիսի 6-ին ՀՀ նախագահի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատվեց Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկը:

դաքսականությունը դանդաղ է իրագործվում: Կանանց մտավոր ներուժը և կազմակերպչական հնարավորությունները լիարժեք չեն ներառվում հայ հասարակության ժողովրդավարացման և զարգացման գործընթացներում:

Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանությունները բնորոշվում են կանանց և տղամարդկանց անհավասարակշիռ ներկայացվածությամբ: 2012 թ. տվյալներով՝ 18 նախարարների ընդամենը 2-ն են կին, 66 փոխնախարարներից՝ ընդամենը 6-ը: Զաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանայք կազմում են ընդամենը 11%:

Հանրապետությունում ոչ մի կին մարզպետ չկա, 21 փոխմարզպետներից մեկն է կին:

2012 թ. ընտրական օրենսգրքում Ազգային ժողովի ընտրություններում քաղաքական կուսակցությունների համամասնական ցուցակների համար ամրագրված 20%-անոց գենդերային քվոտայի շնորհիվ ընտրությունների արդյունքում Ազգային ժողովում կանանց տեսակարար կշիռը մի փոքր բարձրացավ՝ կազմելով 10,7%: Կանանց փոքր թվի հետևանքով Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովներից 4-ում կանայք ներկայացված չեն:

Գենդերային իրավիճակը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում բնութագրվում է կնոջ՝ մարդու իրավունքների խախտումներով, թաքնված հորիզոնական և ուղղահայաց խտրազատման դրսևորումներով:

Հայաստանի Հանրապետությունում անշեղորեն անկում է ապրում կանանց տնտեսական ակտիվությունը, և պահպանվում է գործազրկության «իգական» դեմքը: Կանայք մրցունակ չեն աշխատանքի շուկայում: Պաշտոնապես գրանցված գործազուրկների մեջ կանայք կազմում են մոտ 70%: Առավել ակտիվ աշխատունակ տարիքային խմբում՝ 30-39 տարեկան կանանց շրջանում, գրանցված գործազրկության մակարդակը կազմում է 60.1%: Գործազրկության և աղքատության մեջ հայտնվելու վտանգին առավել ենթակա են 50-54 տարիքային խմբի կանայք, քանի որ այս դեպքում գենդերային խտրականությանը գումարվում է նաև տարիքային խտրականությունը:

Կանանց տնտեսական ակտիվությունը բոլոր տարիքային խմբերում, տղամարդկանց համեմատ, մտում է զգալիորեն ցածր մակարդակում. տնտեսապես ակտիվ են կանանց 48,8%-ը և տղամարդկանց 75,9%-ը:

Աշխատանքի շուկայում կանանց մրցունակ չլինելու պատճառներից և խտրականության ենթարկվելու հետևանքներից են նրանց դուրսմղումը համեմատաբար եկամտաբեր ճյուղերից: Թեպետ հանրապետությունում ամրագրված է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը, կանանց միջին ամսական աշխատավարձը կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի մոտ 60%-ը, քանի որ բարձր վարձատրվող ոլորտներում և բարձր պաշտոններում հիմնականում տեղավորվում են տղամարդիկ, և ցածր վարձատրվող ոլորտները (օրինակ՝ կրթության և առողջապահության) ավանդաբար համարվում են կանանց ոլորտներ: Չբաղվածության բարձր վարկանիշով և վարձատրությամբ ոլորտներում՝ վարկավորման, ապահովագրության, բանկային և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության համակարգում, կանանց ներկայացվածությունը վերջին տարիներին 73%-ից իջել է մինչև 50%:

Թեև ըստ պաշտոնական տվյալների՝ ձեռնարկատերերի ընդհանուր թվում կանայք կազմում են 25%, նրանց իրական թիվը զգալիորեն ավելի ցածր է:

Հանրապետությունում կին գլխավորով տնային տնտեսությունները, որոնց մասնաբաժինը կազմում է 30.7%, ավելի աղքատ են, քան տղամարդ գլխավորով տնային տնտեսությունները: Ամսական աշխատավարձի միջին չափը՝ մեկ շնչի հաշվով, տղամարդ գլխավորով ընտանիքներում գրեթե 2,5 անգամ ավելի է, քան կին գլխավորով ընտանիքներում:

Գենդերային անհավասարակշռությունը ցայտուն է հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունման մակարդակում: Ժողովրդավարական վերափոխումների ամբողջ ընթացքում 49 քաղաքապետների շարքում երբևէ կին չի եղել, իսկ 51 փոխքաղաքապետներից ընդամենը մեկն է կին: Չափազանց ցածր է կանանց ներկայացվածությունը գյուղական համայնքների ավագանու կազմում. 2012 թ. ընտրություններում 866

գյուղական համայնքներից ընդամենը 10 համայնքում է կին ղեկավար ընտրվել: Կին համայնքի ղեկավարների թիվը, փաստորեն, նախորդ ընտրությունների համեմատ, 2012 թ. նվազել է երկու անգամ և կազմել ընդամենը 1,6%: Գյուղական ավագանիների կազմում ընդամենը 8,4%-ն է կին: Ինչ վերաբերում է Երևան քաղաքին, ապա քաղաքապետարանի ղեկավարության կազմում կանայք չկան: 10 վարչական շրջանների ղեկավարության կազմում նույնպես կանայք չկան: Երևանի ավագանու 65 անդամներից կին են ընդամենը 5-ը (9,6%):

Դրա հետ մեկտեղ գենդերային անհավասարակշռություն գրեթե չկա թե՛ քաղաքային, թե՛ գյուղական համայնքների ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում (տե՛ս աղյուսակները):

Քաղաքային համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի գենդերային բաժանումը, 2011 թ.²²

Զ/Գ	Մարզ	Քաղաքապետներ		Քաղաքապետի տեղակալներ		Աշխատակազմի քարտուղարներ		Ավագանու անդամներ		Աշխատակազմի անդամներ	
		Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ
	Արագածոտն	-	3	-	3	-	3	2	30	41	60
	Արարատ	-	4	-	7	-	4	1	51	90	109
	Արմավիր	-	3	-	5	1	2	-	41	64	96
	Գեղարքունիք	-	5	-	5	3	2	3	56	61	115
	Լոռի	-	8	1	4	4	4	8	70	173	201
	Կոտայք	-	7	-	8	3	4	4	77	131	197
	Շիրակ	-	3	-	4	1	2	1	36	152	246
	Սյունիք	-	7	-	6	4	3	-	79	121	86
	Վայոց ձոր	-	3	-	3	2	1	1	32	49	65

²² Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2012:

	Տավուշ	-	5	-	5	3	2	4	46	71	84
	<i>Ընդամենը</i>	-	<i>48</i>	<i>1</i>	<i>50</i>	<i>21</i>	<i>27</i>	<i>24</i>	<i>518</i>	<i>953</i>	<i>1259</i>

Գյուղական համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի գեղերային բաժանումը, 2011 թ.²³

Գ/Գ	Մարզ	Գյուղական համայնքի ղեկավար		Գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ		Գյուղական համայնքի ավագանու անդամներ		Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար		Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցներ	
		Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ
	Արագածոտն	-	111	2	40	9	585	34	65	132	166
	Արարատ	1	92	5	37	21	597	52	37	539	520
	Արմավիր	3	91	2	89	16	667	34	54	284	341
	Գեղարքունիք	2	85	3	62	40	530	21	66	193	459
	Լոռի	6	99	8	57	75	495	62	28	314	289
	Կոտայք	1	59	3	44	24	378	31	26	311	323
	Ճիրակ	2	114	4	55	45	554	52	56	361	232
	Սյունիք	4	98	27	62	83	425	50	46	344	200
	Վայոց ձոր	1	40	-	11	8	282	15	26	106	235
	Տավուշ	2	55	-	41	25	329	32	22	291	289
	<i>Ընդամենը</i>	<i>22</i>	<i>844</i>	<i>54</i>	<i>498</i>	<i>346</i>	<i>4842</i>	<i>383</i>	<i>426</i>	<i>2875</i>	<i>3054</i>

²³ «Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, ԳՂ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2012:

4.3. Տեղական ինքնակառավարմանը կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության խոչընդոտները: Գենդերային խտրականությունը և դրա դրսևորումները:

h նչպես տեսանք, հատկապես տեղական ինքնակառավարման ոլորտում Հայաստանը չափազանց հեռու է իր նախանշած նպատակներից ու ստանձնած պարտավորություններից, նա ոչ միայն չի մոտենում մինչև 2015 թվականը համայնքների ղեկավարի պաշտոնում կանանց 10%-ի ապահովման ցուցանիշին, այլև ավելի է հեռանում, քանի որ առանց այն էլ չափազանց ցածր ցուցանիշներն այս ոլորտում էլ ավելի անկում են ապրում:

Այս ինդիքում, ի թիվս այլոց, բավական կարևոր դեր են խաղում գենդերային կարծրատիպերը, քանի որ, հիմնականում առաջանալով սուբյեկտիվ, կանխակալ կարծիքի և բևեռային հակադրությունների հետևանքով, դրանք կարող են խտրական տրամերի և մարդու իրավունքների սահմանափակման նախադրյալ դառնալ:

Խտրականությունը բնորոշվում է որպես մի մոտեցում, որով տարբերակում է մտցվում մարդկանց մեջ, մեկին արգելվում է այն, ինչ թույլատրվում է մյուսին, մեկին նախապատվություն է տրվում մյուսին նկատմամբ, մեկին առավելություններ են վերագրվում, մյուսին՝ թերություններ և անգամ արատներ, մեկին ազատություններ և հնարավորություններ են տրվում, մյուսինը՝ սահմանափակվում: Խտրականությունը դրսևորվում է տարբեր հատկանիշների հիման վրա, ըստ այդմ տարբերում են ռասայական, ազգային, տարիքային և այլ տեսակներ: Նաև՝ գենդերային, որ խտրականության ամենատարածված տեսակներից է և մարդկության պատմության ողջ ընթացքում հիմնականում դրսևորվել է ի վնաս կանանց:

Մինչդեռ մարդու իրավունքների և ժողովրդավարության գաղափարախոսության հիմքում, որոնք մեր դարաշրջանի ուղեկիշներն են, ընկած է անխտրականության սկզբունքը: Այսինքն՝ մեր մոլորակում բոլորը պետք է հավասար լինեն, բոլորը պետք է ունենան նույն իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ հատկանիշից՝ սեռից, մաշկի գույնից, ծագումից, էթնիկ պատկանելությունից, սոցիալական դիրքից և այլն:

Այսպիսով, խտրականության յուրաքանչյուր դրսևորում լուրջ մարտահրավեր է մարդու իրավունքների իրականացման և ժողովրդավարության հաստատման ճանապարհին, որ հիմքից խարխուլում է դրանք և կասկածի տակ դնում դրանց իրականացման ամենամոտ հեռանկարներն անգամ:

Գեղեթրային խտրականության սահմանումը տրված է Կանանց Նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածում:

«...Կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով **ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում**, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական վիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»²⁴:

Այսպիսով, գեղեթրային խտրականությունը հանգեցնում է մարդու իրավունքների խախտման և անհավասարության մարդկության երկու ամենամեծ խմբերի՝ երկու կեսի՝ կանանց և տղամարդկանց միջև: Չենք կարող ասել, թե որևէ տեղ կամ որևէ բնագավառում ապահովված են մարդու իրավունքներն ու ազատությունները, եթե խտրականություն գոյություն ունի կանանց կամ տղամարդկանց նկատմամբ, եթե մի սեռին տրվում է նախապատվություն մյուսի համեմատությամբ:

Գեղեթրային խտրականությունն էլ իր հերթին երկու դրսևորում ունի՝ բացահայտ և թաքնված: Խտրականությունը բացահայտ է, եթե այն ամրագրված է իրավական Նորմերում: Այսօր աշխարհի երկրների մեծ մասում, նաև մեր հանրապետությունում, բացահայտ խտրականությունը վերացվել է, քանի որ և՛ սահմանադրությամբ, և՛ օրենքներով ամրագրվել է սեռերի իրավահավասարությունը:

²⁴ Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, հոդվ. 1:

Սակայն դեռևս չի իրականացել միջազգային հանրության գլխավոր նպատակներից մեկը՝ սեռերի դե ֆակտո հավասարությունը, քանի որ գրեթե ամենուրեք և կենսագործունեության տարբեր ոլորտներում հարատևում է գենդերային կարծրատիպերի հիման վրա ձևավորված կանխակալ վերաբերմունքը սեռերի նկատմամբ:

Գենդերային խտրականությունն առկա է մարդու կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, հասարակական-քաղաքական կյանքում, աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում, կրթության, առողջապահության ոլորտներում և այլուր: Եվ յուրաքանչյուր ոլորտում դրա դրսևորման ձևերն ու հաղթահարման ուղիները տարբեր են:

4.4. Համալիր մոտեցման անհրաժեշտությունը տեղական ինքնակառավարման ոլորտում: Գենդերային հավասարությանը հասնելու աջակցող գործողություններ և ժամանակավոր միջոցներ:

Ինչպես տեսանք, տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության հիմնաքարերից է: Ժողովրդավարության կայացման նախապայման է նաև սեռերի հավասարությունը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում: Թե՛ Միավորված ազգերի կազմակերպությունը, թե՛ Եվրոպայի խորհուրդը, թե՛ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, որոնց անդամակցում է Հայաստանը, թե՛ Եվրամիությունը, որին ձգտում է միանալ Հայաստանը, իրենց փաստաթղթերում հաստատել են այն գաղափարը, որ չի կարող լինել ժողովրդավարություն առանց որոշումների ընդունման բոլոր մակարդակներում սեռերի հավասարակշռված ներկայացվածության և երկու սեռերի համար քաղաքական ու քաղաքացիական մասնակցության հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման:

Արդեն իսկ XX դարի վերջին միջազգային հանրությունը տևական ուսումնասիրությունների և համաշխարհային խորհրդածողութի բնարկումների արդյունքում եկավ այն եզրակացության, որ հավասար իրավունքների հռչակումը և անխտրական, գենդերային

առումով չեզոք օրենքներն անհրաժեշտ պայման են, բայց ոչ բավարար: Անհրաժեշտ է ստեղծել նաև հավասար հնարավորություններ այդ իրավունքներից օգտվելու համար:

Այդպիսի հնարավորություններ են ապահովում այսպես կոչված ժամանակավոր միջոցները²⁵, երբ մի սեռի համար սահմանվում են ժամանակավոր արտոնություններ, որպեսզի հավասարեցվեն երկու սեռերի մեկնարկային հնարավորությունները:

Ներկայումս լայնորեն կիրառվող (նաև մեր երկրում) ժամանակավոր միջոցի օրինակ է գենդերային քվոտաների համակարգը, երբ ներկայացուցչական մարմնում գենդերային հավասարակշռություն ապահովելու նպատակով կուսակցությունների համամասնական ցուցակներում կամ խորհրդարանում և կամ որոշում կայացնող այլ մարմիններում կանանց ներկայության որոշակի քվոտա է սահմանվում:

Նոր հազարամյակի շեմին միջազգային հանրությունը, մասնավորապես՝ Եվրոպայի խորհուրդը, հանգեց նաև այսպես կոչված համալիր մոտեցման (Gender mainstreaming) գաղափարին, ըստ որի՝ կանանց և տղամարդկանց հավասարության հիմնախնդիրները պետք է ներառվեն բոլոր բնագավառներում ու մակարդակներում, գենդերային չափումը պետք է ընկած լինի բոլոր որոշումների և ձեռնարկումների գնահատման հիմքում: Այսպիսի գենդերայնորեն զգայուն քաղաքականությունն է, որ կարող է հանգեցնել ոչ միայն իրավունքների, այլև հնարավորությունների հավասարության և զուգակշռված ժողովրդավարության:

Ես Նախարարների կոմիտեն իր 119-րդ նստաշրջանում²⁶ ընդունեց «Գենդերային հավասարության կենսագործումը» հռչակագիրը, որում հիշեցրեց այն մասին, որ տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը մարդու իրավունքների անբաժանելի մասն է և ժողովրդավարության հիմնական չափանիշը, որ գենդերային հավասարությունն նշանակում է հավասար հասանելիություն, հնարավորությունների տրամադրում, պատասխանատվություն և

²⁵ Մինչև վերջերս այդպիսի ժամանակավոր միջոցները համարվում էին դրական խտրականություն:

²⁶ Ես Նախարարների կոմիտեի 11-րդ նստաշրջանը տեղի է ունեցել Մադրիդում 2009 թ. մայիսին:

հասարակական ու մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց մասնակցություն, որ գենդերային հավասարությունը գենդերային անհավասարության, ոչ թե գենդերային տարբերությունների հակադրությունն է: Եվ նշելով, որ «Տղամարդկանց և կանանց հավասարության մասին հռչակագրից» 20 տարի անց էլ գենդերային անհավասարության հաղթահարումը թե՛ իրականության մեջ և թե՛ օրենսդրությունում նախկինի պես խնդիր է մտնում անդամ պետությունների համար, ընդգծելով, որ իսկական ժողովրդավարությունը պետք է լիակատար օգտագործի կանանց և տղամարդկանց իրազեկությունը, գիտելիքներն ու ստեղծագործական ներուժը բոլորի համար առավել բարձր որակով կյանքի ապահովման խնդրում, ինչպես նաև հարգանքն այն արժեքների նկատմամբ, որոնց վրա հիմնվում է Եվրոպայի խորհուրդը, կոչ արեց անդամ պետություններին ստանձնել հավասարության խզման լիակատար հաղթահարման խնդրի լուծումը թե՛ ըստ եռության և թե՛ օրենքով, և, ի թիվս այլոց, ձեռնարկել հետևյալ միջոցները.

- ✓ Ուղղել ուժերը ստեղծված կարծրատիպերի վերացմանը՝ կրթության և գիտական հետազոտությունների ոլորտում գենդերային հիմնախնդրի արդիականացման մեջ հետագա ներդրման ուղիով, ներառյալ գենդերային հետազոտությունները՝ ապահովելու համար, որ կանայք և տղամարդիկ կարողանան լիարժեք իրացնել իրենց տնտեսական և սոցիալական ներուժը:
- ✓ Գենդերային հավասարության հայեցակարգն ինտեգրել իշխանության մարմինների գործունեության մեջ՝ հրապարակայնության, թափանցիկության, բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովման, ինչպես նաև տղամարդկանց և կանանց միջև լիակատար հավասարության հասնելու գործընթացի մասին իրական հաշվետվողականության միջոցով:
- ✓ Եվ այդ նպատակով, մասնավորապես, ձեռնարկել տղամարդկանց և կանանց միջև պարտականությունների հավասար բաշխման ապահովման և մասնագիտական գործունեության հետ մասնավոր և ընտանեկան կյանքի

զուգակցման համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտ միջոցներ, ինչպես նաև ընդունել ու իրականացնել կոնկրետ քաղաքական միջոցառումներ, գործողությունների ծրագրեր տարբեր մակարդակներում և ապահովել դրանց պատշաճ ֆինանսավորումը:

2010 թ. ԵՍ Խորհրդարանական վեհաժողովը²⁷ դիմել է անդամ պետություններին՝ առաջարկելով անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ բարձրացնելու կանանց ներկայացվածությունը քաղաքականության մեջ: Հանձնարարականում առաջարկվում է մասնավորապես մեծամասնական կամ բազմակի համակարգերով երկրներում քննարկել այն սկզբունքի ներդրման հարցը, որի համաձայն՝ յուրաքանչյուր կուսակցություն ընտրում է կուսակցական ընտրական տարածքում առնվազն մեկ իգական և մեկ արական սեռի հավակնորդ կամ փնտրում է քաղաքական կյանքում կանանց ներկայացվածության բարձրացման այլ ուղիներ, ինչպես, օրինակ՝ այնպիսի նորամուծության ներդրումը, ինչպես պարտադիր գենդերային քվոտաներն են քաղաքական կուսակցությունների ներսում, կամ «միայն կանանց կարճ ցուցակների» ձևավորումը, կամ «զույգերով» ընտրատարածքների ստեղծումը, որը նույնպես պետք է ուղեկցվի պատժամիջոցների արդյունավետ համակարգով: Այդ փաստաթղթում վեհաժողովը նաև հանձնարարում է Նախարարների կոմիտեին ցուցում տալ համապատասխան կոմիտեին քննարկելու Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության Նախագծի մշակման հարցը, որը կամրագրի կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, ինչպես նաև Նախատեսել անհրաժեշտ բացառությունները, որոնք թույլատրում են ժամանակավոր միջոցներ հոգուտ թերի ներկայացված սեռի:

Վերջապես, տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածությունը մեծացնելու առումով առանցքային նշանակություն ունի ԵՍ Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի 18-րդ նստա-

²⁷ ԵՍԽԿ թիվ 1899 (2010) «Ընտրական համակարգը որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածության բարձրացման գործիք» հանձնարարականում:

շրջանում²⁸ ընդունված թիվ 288 (2010) «Ի սատարում տեղական և տարածաշրջանային մակարդակում քաղաքական կյանքում սեռերի կայուն հավասարության» հանձնարարականը: Կոնգրեսը մեկ անգամ ևս շեշտեց, որ կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը ժողովրդավարության կարևորագույն կողմն է, այնուհետև ընդգծեց, որ կառավարության վրա է նախ և առաջ ընկնում կանանց և տղամարդկանց հավասարության առաջ-մղման պատասխանատվությունն ապահովելու պարտավորու-թյունը, սակայն հասարակական կյանքի բոլոր մասնակիցները կա-ռավարման բոլոր մակարդակներում պատասխանատվություն են կրում և պետք է մասնակցեն այդ հավասարության պաշտպանու-թյանն ու ապահովմանը, ինչպես նաև սոցիալական և մշակութային զարգացման այն գործընթացներին, որոնք պահանջվում են այս առկջությամբ:

Այդ նպատակով Կոնգրեսը հանձնարարում է անդամ պե-տություններին բարձրացնել իշխանության ազգային, տարա-ծաշրջանային և տեղական մարմինների ներուժը՝ կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովման քաղաքակա-նության վարման համար, մասնավորապես՝

- ✓ ընդունել բոլոր մակարդակներում իշխանությունների բոլոր գործողություններում գենդերային չափումը պարտադրող օրենսդրություն, գնահատել դրա ազդեցությունը և հրապարակել այդ եզրակացությունները (հավասարության ցուցիչները),
- ✓ օգնություն ցույց տալ, հատկապես՝ ֆինանսական, ինչը հնարավորություն կտա մունիցիպալիտետներին և տա-րածաշրջաններին միասնական մոտեցում հանդես բե-րելու (gender mainstreaming) տղամարդկանց և կա-նանց հավասարության նկատմամբ ծառայություններ մատուցելիս և, անհրաժեշտության դեպքում, սեռերի կայուն հավասարությամբ հասարակության ստեղծմանն ուղղված կոնկրետ ծրագրերի շնորհիվ, կանանց և տղամարդկանց

²⁸ Նստաշրջանը տեղի է ունեցել Ստրասբուրգում, 2010 թ. մարտի 17-19-ը:

միջև լիազորությունների, ռեսուրսների և ծառայությունների արդարացի բաշխման հիման վրա,

- ✓ այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք կխթանեն կանանց մասնակցությունը և պատասխանատու պաշտոններ զբաղեցնելը, ինչպես նաև բարենպաստ միջոցառումներ ձեռնարկել ընտրություններում կին թեկնածուների համար,
- ✓ տեղեկատվական քարոզարշավների ֆինանսավորման հիման վրա ՉԼՄ-ներում ապահովել ընտրությունների կին թեկնածուների դրական վերլուծությունները և այլն:

V ԳԼՈՒԽ

ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ո՞վ կարող է ընտրվել համայնքի ավագանի կամ համայնքի ղեկավար

Յամայնքի ղեկավար և ավագանու անդամ կարող է ընտրվել 25 տարին լրացած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին 6 ամիսը հաշվառված, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն.

1. Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց վրա:
3. Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիները:

4. Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները, ձերբակալված կամ կալանավորված անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն կարող մասնակցել:

5.2. Ինչպես մասնակցել ընտրություններին

Ընտրությունը թեկնածուի համար բաղկացած է երեք փուլից.

1. Փաստաթղթերի նախապատրաստում և գրանցում, ընտրարշավի մշակում:
2. Զարոգարշավի անցկացում:
3. Ընտրարշավի արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Վարժանք

Վարժանքի նպատակը

- Առաջին անգամ առաջադրվողներին ծանոթացնել ընտրարշավի կազմակերպման փուլերին:
- Ապահովել փորձի փոխանակումը նոր թեկնածուների և առաջադրման փորձ ունեցողների միջև:
- Ընդգծել թիմային աշխատանքի կարևորությունն ու արդյունավետությունը թեկնածուի համար:
- Սովորեցնել պլանավորել ընտրարշավը և ծրագիր կազմել:
- Սովորեցնել թեկնածուին նախապատրաստվել նախընտրական ելույթին:

Վարժանքի անցկացում

Մասնակիցներին բաժանեք խմբերի: Յուրաքանչյուր խմբից մեկը պետք է առաջադրվի համայնքի ղեկավարի թեկնածու: Թիմը պետք է օգնի նրան անցնելու վերը նշված բոլոր փուլերը:

Առաջին փուլ՝ փաստաթղթերի նախապատրաստում գրանցման համար:

- Իրավական ներածություն՝ ծանոթացում ընտրական օրենսդրությանը (20 րոպե, բաժանեք նախապես բազմացրած օրենսդրության համապատասխան հոդվածները, դիմումների օրինակները, գրանցման մասին որոշումը, ընտրաթերթիկները):
- Մասնակիցները լրացնում են անհրաժեշտ փաստաթղթերը (20 րոպե):
- Ներկայացնում են փաստաթղթերն «ընտրական հանձնաժողով»:

Վարողը տեղյակ է պահում առաջին փուլի ավարտի մասին և հայտարարում երկրորդ փուլի սկիզբը, որն ամենադժվարն է:

Երկրորդ փուլ՝ քարոզարշավի անցկացում (30 րոպե):

- Նախընտրական արշավի նախապատրաստում:
- Ընտրական ծրագրի մշակում:
- Նախընտրական ելույթի նախապատրաստում:
- Ընտրողների հետ հանդիպումների կազմակերպում:

Նախընտրական ելույթներին անհրաժեշտ է տրամադրել ընդամենը 5-7 րոպե: Խումբը կարող է թռուցիկներ, նախընտրական պաստառներ պատրաստել: Անհրաժեշտ է, որ նրանք ևս ելույթ ունենան և ներկայացնեն թեկնածուին: Անհրաժեշտ է հաղորդագրություն պատրաստել ՉԼՄ-ների համար:

Այնուհետև վարժանքի մասնակիցները ընտրում են «ամենահաջողված շնորհանդեսը», և անցում է կատարվում երրորդ փուլին, որը միաժամանակ նպաստելու է վարժանքի ամփոփմանը:

Երրորդ փուլ՝ Նյութի ամփոփում. ընտրարշավի արդյունքների վերլուծություն և ամփոփում (30 րոպե):

Այս աշխատանքում կարևոր է, որ ոչ միայն թիմի կողմից առաջադրված թեկնածուն ակտիվորեն մասնակցի, այլ ամբողջ խումբը: Ցանկալի է, որ յուրաքանչյուր խմբում լինի գոնե մեկը, որը մասնակցած լինի ՏԻՄ ընտրություններին և անհրաժեշտ փորձ ունենա: Ընտրությունը կազմակերպելուց հետո յուրաքանչյուր խումբ պետք է վերլուծություն անի և ներկայացնի իր արշավի ուժեղ և թույլ կողմերը:

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ ընտրական օրենսգրքում կան հոդվածներ, որոնք վերաբերում են ամեն կարգի ընտրություններին, այդ թվում՝ ՏԻՄ-երին, և կան հոդվածներ, որոնք վերաբերում են միայն ՏԻՄ-երին: Հավելված 1-ում տրվում են ՀՀ ընտրական օրենսգրքի այն հոդվածները, որոնք վերաբերում են ընդհանրապես ընտրություններին, իսկ հավելված 2-ում՝ այն հոդվածները, որոնք վերաբերում են միայն ՏԻՄ-երին:

Ընտրություններին վերաբերող հողվածներ ՀՀ ընտրական օրենսգրքից

Հոդված 18. Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները

1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ շրջանի քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է:

2. Պետությունն ապահովում է նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք թեկնածուներին ու համամասնական ընտրակարգով

ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

3. Համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք թեկնածուներին ու համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:
4. Ընտրողները, թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրավունք ունեն օրենքով չարգելված ձևերով քարոզչություն կատարելու թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի օգտին կամ դեմ:
5. Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրություն նշանակվելուց հետո կարող են կազմավորել ընտրական շտաբներ: Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները: Ընտրական շտաբների վրա տեղադրված ցուցանակները սույն օրենսգրքի իմաստով քարոզչական տպագիր նյութեր չեն համարվում, եթե դրանք չեն ներառում թեկնածուին, կուսակցությանը (կուսակցության դաշինքին) կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր, դրանց թիվը չի գերազանցում ընտրության համար կազմավորված ընտրական տեղա-

- մասերի թիվը, և յուրաքանչյուր պաստառի (ցուցանակի) մակերեսը չի գերազանցում 6 քառակուսի մետրը:
6. Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝
 - 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.
 - 2) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին.
 - 3) ընտրական հանձնաժողովի անդամներին:
 7. Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (զուգորդվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները:
 8. Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, ինչպես նաև ընտրությունների մյուս մասնակիցները պարտավոր են պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահման-

ված կարգը: Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու համար կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ՝ տալով խախտումը դադարեցնելու համար 3 օրը չգերազանցող ողջամիտ ժամկետ: Նշված ժամկետում խախտումը չդադարեցնելու դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտման դեպքում, որը կարող է եսկան ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, եթե այն կատարել է թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, ապա թեկնածուին, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

9. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են ընտրական գործընթացներում իրենց վստահված անձանց միջոցով: Այդ նպատակով՝ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող թեկնածուներն իրավունք ունեն նախընտրական քարոզչության ընթացքում օրական մինչև 2 ժամ տևողությամբ հանդիպումներ ունենալու, համապատասխանաբար, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում իրենց ներկայացնող մինչև 3 վստահված անձանց հետ:

ՏԻՄ ընտրություններին վերաբերվող հոդվածներ ՀՀ ընտրական օրենսգրքից

Հոդված 130. Ընտրական համակարգը

1. Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ մեծամասնական ընտրատարածք:
2. Համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք:
3. Համայնքի ավագանին բաղկացած է՝
 - 1) հինգ անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում.
 - 2) յոթ անդամից՝ 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքում.
 - 3) ինն անդամից՝ 2 000-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքում.
 - 4) տասնմեկ անդամից՝ 4 000-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում.
 - 5) տասնհինգ անդամից՝ 10 000-ից մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքում.
 - 6) քսանմեկ անդամից՝ 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:

Հոդված 133. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելը

1. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցությունները իրենց համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանումների որոշմամբ, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ ինքնաառաջադրման կարգով այդ մասին ներկայացնելով դիմում, որի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Կուսակցությունը կարող է համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհանդիսացող անձի:

2. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրելու մասին կուսակցության համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանման որոշումը, ինքնաառաջադրման դեպքում դիմումը ներառում են համայնքի անվանումը և թեկնածուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- 1) ազգանունը, անունը, հայրանունը.
- 2) ծննդյան ամսաթիվը.
- 3) հաշվառման վայրը.
- 4) աշխատանքի վայրը և պաշտոնը (գրադմուկքը).
- 5) կուսակցական պատկանելությունը, ինչպես նաև կարող են ներառել թեկնածուի մինչև երկու լիազոր ներկայացուցչի վերաբերյալ տվյալներ (նրանց ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը, աշխատանքի վայրը և պաշտոնը (գրադմուկքը)):

3. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները կուսակցության համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանման որոշմանը կամ ինքնաառաջադրման մասին դիմումին կից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են՝

- 1) ընտրական գրավի գումարի վճարման անդորրագիրը:

Մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն վճարում է նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի, ավագանու անդամը՝ 10-ապատիկի, 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 100-ապատիկի, ավագանու անդամը՝ 15-ապատիկի, 2

000-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 150-ապատիկի, ավագանու անդամը՝ 20-ապատիկի, 4 000-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 300-ապատիկի, ավագանու անդամը՝ 30-ապատիկի, 10 000-ից մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 500-ապատիկի, ավագանու անդամը՝ 70-ապատիկի, իսկ 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 1 000-ապատիկի, ավագանու անդամը՝ 100-ապատիկի չափով ընտրական գրավ,

- 2) տեղեկանք՝ վերջին վեց ամսում տվյալ համայնքի բնակչության ռեզիստրում հաշվառված լինելու մասին.
- 3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
4. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված տեղեկանքի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Նշված տեղեկանքը տրամադրում է լիազորված պետական մարմինը դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը:
5. Լիազորված պետական մարմինն իր որոշմամբ մերժում է դիմումատուին նշված ձևի տեղեկանք տրամադրելը, եթե նրա վերաբերյալ տվյալները չեն բավարարում սույն օրենսգրքի 132-րդ հոդվածի համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պահանջները:
6. Գրանցման փաստաթղթերը ներկայացվում է միայն թեկնածուի կամ լիազոր ներկայացուցչի միջոցով՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում:
7. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու գրանցվելու համար ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ

ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում ամկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Հանձնաժողովն իրավունք չունի չընդունելու ներկայացված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ: Սույն մասի դրույթները չեն կիրառվում փաստաթղթերում տեղ գտած այնպիսի սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ շտկելու կամ այլ թերություններ վերացնելու նկատմամբ, որի իրավունքը օրենքով վերապահված է այդ փաստաթղթերն ընդունած կամ տրամադրած մարմիններին:

Ներկայացված փաստաթղթերում սույն մասի երկրորդ պարբերությունում նշված անճշտությունների կամ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 48 ժամ է տալիս նշված անճշտությունները վերացնելու, կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում թեկնածուի գրանցումը մերժվում է:

Հոդված 134. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին գրանցելը

1. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները գրանցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից գրանցման վերաբերյալ առարկություն չլինելու դեպքում թեկնածուն գրանցվում է:

2. Թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստին իրավունք ունեն ներկա լինելու թեկնածուն և լիազոր ներկայացուցիչը:

Հոդված 140. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախընտրական հիմնադրամը

1. Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար 10000 և ավելի ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուն բացում է նախընտրական հիմնադրամ:
2. Ավագանու անդամի և մինչև 10000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուն բացում է նախընտրական հիմնադրամ, եթե զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում է (կարող է օգտագործել) նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար:
3. Նախընտրական հիմնադրամը համալրվում է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածում նշված կամավոր մուծումներից:

Մինչև 10000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն իրավունք ունի իր հիմնադրամում մուծում կատարելու նվազագույն աշխատավարձի մինչև 150-ապատիկի չափով, իսկ նրան առաջադրած կուսակցությունը՝ մինչև 200-ապատիկի չափով գումար:

10000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն իրավունք ունի իր հիմնադրամում մուծում կատարելու նվազագույն աշխատավարձի մինչև 500-ապատիկի չափով, իսկ նրան առաջադրած կուսակցությունը՝ մինչև 1000-ապատիկի չափով գումար:

4. Թեկնածուի նախընտրական հիմնադրամում յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կատարել կամավոր մուծում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար մինչև՝

- 1) 50-ապատիկի չափով՝ մինչև 10000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 2) 100-ապատիկի չափով՝ 10000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում:
5. Նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուն զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար համայնքի ղեկավարի թեկնածուն իրավունք ունի ծախսելու նվազագույն աշխատավարձի մինչև՝
- 1) 3000-ապատիկի չափով գումար՝ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 2) 7000-ապատիկի չափով գումար՝ 4000-ից մինչև 10000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 3) 15000-ապատիկի չափով գումար՝ 10000-ից մինչև 70000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 4) 25000-ապատիկի չափով գումար՝ 70000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում,
- իսկ ավագանու անդամի թեկնածուն նվազագույն աշխատավարձի մինչև՝
- 5) 500-ապատիկի չափով գումար՝ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 6) 1000-ապատիկի չափով գումար՝ 4000-ից մինչև 10000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 7) 3000-ապատիկի չափով գումար՝ 10000-ից մինչև 70000 ընտրող ունեցող համայնքի դեպքում.
 - 8) 5000-ապատիկի չափով գումար՝ 70000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում:

Տեղեկատվական օգնություն

1. Ընտրություններից առաջ խիստ կարևոր է ձեր՝ որպես թեկնածուի դրական կերպարի կերտումը: Դրա համար.
 - գնահատեք ձեր ուժեղ և թույլ կողմերը, հմտություններն ու փորձը համայնքում,
 - ձեր կրթության աստիճանը, ծագումը, ընտանիքը,
 - ձեր տեսքը պետք է լինի ներկայանալի, խոսքը՝ վստահելի:
2. Դուք պետք է տեղյակ լինեք, թե ինչ է ակնկալում ձեզից հասարակությունը: Այդ հարցը պարզելու համար կազմակերպեք հարցում:

Հարցումները ինքնանպատակ չեն: Դրանք անհրաժեշտ են.

- պարզելու համար, թե ինչի մասին են մտածում մարդիկ,
- որոշելու համար առաջնահերթ խնդիրները,
- պարզելու համար ձեր կողմսակիցների մոտավոր թվաքանակը և «տատանվողներին», որոնք դեռ կարող են փվեարկել ձեր օգտին:

Հարցերը լինում են բաց և փակ: Բաց են այն հարցերը, երբ պատասխանը ամբողջությամբ տալիս է հարցվողը, օրինակ՝ «Որո՞նք են առաջիկա ընտրություններին ձեզ անհանգստացնող խնդիրները»:

Փակ են այն հարցերը, երբ ընտրողներին հնարավորություն է տրվում ընտրելու առաջադրված հարցաչարից: Այս կերպ ավելի հեշտ է տեղեկատվություն ստանալ, բացի դրանից, անուղղակիորեն կարելի է ուղղորդել նրանց: Օրինակ՝

Խնդրում եմ նշել, թե տվյալ խնդիրներից որոնք են ձեզ առավել անհանգստացնում.

- մուր-մանկապարտեզների բացումը կամ նրանց որակի բարձրացումը,
- աղբահանության լավ կազմակերպումը,
- ջրի մատակարարման որակի բարձրացումը,
- տեղական տրանսպորտի որակի բարձրացումը:

Կամ՝

- Կանանց ներկայությունը կբարձրացնի ավագանու աշխատանքի որակը:
համաձայն եմ/համաձայն չեմ/չեմ կողմնորոշվել
- Ավագանու կին անդամները ավելի աշխատասեր են:
համաձայն եմ/համաձայն չեմ/չեմ կողմնորոշվել
- Ավագանու կին անդամների կոռուպցիոն ռիսկերն ավելի քիչ են:
համաձայն եմ/համաձայն չեմ/չեմ կողմնորոշվել

Ունենալով հարցման արդյունքները՝ ավելի հեշտ է կառուցել նախընտրական ծրագիրը: Այն պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

- Ինչը ձեզ դրդեց առաջադրվել որպես ՏԻՄ ղեկավար կամ ավագանու անդամ:
- Ինչ ծրագրեր եք նախագծում իրականացնել, իրն է ձեր նպատակը:
- Որո՞նք են այն հարցերը, որոնք համարում եք առաջնային:
- Ինչպե՞ս եք պատրաստվում լուծել այդ խնդիրները:

Այդ բոլորից հետո նախապատրաստեք նախընտրական ծրագիրը: Ծրագրում՝

- ներկայացրեք իրական վիճակի ձեր վերլուծությունը,
 - ձևակերպեք հետևյալ 5 հարցերի պատասխանները մեկ կամ երկու նախադասությամբ.
1. Ինչ է կատարվում համայնքում:
 2. Ո՞վ է մեղավոր դրա համար:
 3. Որո՞նք են առավել խնդրաշատ ոլորտները:
 4. Ե՞րբ են այդ խնդիրներն առաջացել:
 5. Ինչու՞ են դրանք առաջացել:

- Ներկայացրեք միայն իրական և ստուգված փաստեր:
- Ներկայացրեք հիմնախնդիրների լուծման ձեր տեսլականը:

Ձեզ տրված է ընդամենը 5 րոպե և դուք պետք է հասցնեք հաղորդել ծրագրի հիմնադրույթները: Յետևաբար դուք պետք է.

- առանձնացնեք ծրագրի 2-3 կարևորագույն կետերը,
- հաղորդեք հիմնական միտքը, որ ցանկանում եք հայտնել, ընդգծեք այն խոսքի վերջում,
- Նշումներ ունեցեք ձեզ մոտ,
- մտքերը հայտնելու համար բերեք օրինակներ անձնական փորձից, հետաքրքիր դեպքերից,
- մեջբերեք ասացվածքներ, որպեսզի ուշագրավ դարձնեք ուղերձի գլխավոր հատվածը,
- վիճակագրությունը պետք է պարզ, հասկանալի և հիշվող լինի: Օրինակ՝ ասեք երեքից մեկը, ոչ թե 33%-ը,
- աշխատեք ելույթը կառուցել դրականի վրա, ոչ թե բացասականի,
- օգտագործեք պարզ բառեր,
- դիմեք անմիջականորեն քվեարկողներին:

Ի՞նչ է պետք անել ելույթ ունենալիս.

- հանգիստ և բարեհամբույր եղեք,
- հստակ ներկայացրեք ձեզ,
- խոսեք հանդարտ,
- արտահայտեք հիմնական միտքը:

Ի՞նչ չպետք է անել ելույթ ունենալիս.

- շտապել,
- երկար խոսել,
- լինել նեզատիվ:

Մամուլի հաղորդագրությունը պետք է կարճ լինի: Անհրաժեշտ է նշել՝

- ընտրարշավի մեկնարկը,
- ով է թեկնածուն,
- թեկնածուի ռազմավարությունը, որում պետք է կարճ թվարկվեն ընտրողներին հուզող հարցերը,
- կարևոր հանդիպումները և միջոցառումները,
- ընտրեք հեշտ հիշվող կարգախոս, որպեսզի այն գրավի լրագրողների ուշադրությունը,
- տրամադրեք լրագրողներին բոլոր կոնտակտային տվյալները, այսինքն՝ անուն-ազգանուն և հեռախոսահամար, որպեսզի նրանք կարողանան ապահովել հետադարձ կապը:

Լրատվամիջոցների հետ շփվելիս հաշվի առեք հետևյալը.

- հրատարակչությունների, ռադիոհեռուստակայանների ժամկետային գրաֆիկները,
- լրագրողների հետ հարաբերությունները պետք է շահավետ լինեն երկու կողմի համար,
- Նախապես պարզեք ձեզ մոտ ուղարկված լրագրողների քաղաքական կողմնորոշումները,
- հիշեք, որ չափազանց անկեղծությունը կարող է օգտագործվել ի վսաս ձեզ:

Ինչ պետք է ապահովի աջակցող խումբը ընտրարշավի ընթացքում.

- թեկնածուի կերպարի կառուցում, ճանաչելիության ապահովում,
- հասարակության և թեկնածուի միջև կապի ապահովում,
- թեկնածուի հիմնական խնդիրների հստակեցում,
- այլ թեկնածուների չեզոքացում կամ հակադրում,

- հասարակությանը թեկնածուի արժանիքների մասին տեղեկացում,
- հասարակությանը նրա ծրագրերին և առաջարկներին ծանոթացում (եթե ցանկանում եք ցույց տալ, որ ձեր թեկնածուն զբաղվելու է այս կամ այն խնդիրներով, պետք է լավատեղյակ լինեք այդ բնագավառներում ընտրողների տեսակետներին և ցանկություններին),
- պետք է դրական լույսի ներքո ներկայացնեք կին թեկնածուին և ի հայտ բերեք նրա առավելությունները տղամարդ թեկնածուի նկատմամբ: Հետևաբար պետք է տեղյակ լինեք հասարակության կարծիքին տղամարդ և կին թեկնածուների առավելությունների և թերությունների մասին: Փորձեք ընտրարշավը տանել կնոջ ուժեղ կողմերն ընդգծելու ուղղությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՔԱՂԱՔՔՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

I Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին Նախարարների կոմիտեի Rec (2003)3 հանձնարարական, հավելված

Սույն երաշխավորության նպատակների համաձայն՝ «կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը նշանակում է, որ յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը որոշում կայացնող մարմնի կազմում չպետք է ցածր լինի 40%-ից:

1. Նախատեսել օրենսդրական բարեփոխումներ՝ նպատակ ունենալով զուգակշռության շեմերի սահմանումը, այսինքն՝ տեղական ընտրություններում թեկնածուների ցուցակներում կանանց և տղամարդկանց պարտադիր թվաքանակի ապահովում ընդհանուր թվում:
2. համամասնական ցուցակների դեպքում նախատեսել տղամարդ թեկնածուների և կին թեկնածուների հերթագայության համակարգի ներդրումը (մեկ տղամարդ/մեկ կին):

Լրացուցիչ միջոցառումներ

1. Չորակցել և խրախուսել կանանց քաղաքական գործունեությունը՝ նպաստելով տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներում ընտրված կանանց ցանցերի ստեղծմանը:

II Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրես, «Տեղական և տարածաշրջանային մակարդակում կանանց և տղամարդկանց հավասարության համալիր մոտեցման մասին. քաղաքներում և տարածաշրջաններում կանանց և տղամարդկանց հավասարության աջակցության ռազմավարություն», 148 (2004) հանձնարարական

ՉԼՄ-ներում և բոլոր մակարդակների կրթության միջոցով ծավալել կանանց և տղամարդկանց հավասարության ոլորտում համալիր մոտեցման քաղաքականության կարևորության և արդյունավետության ըմբռնումը

III Ընտրություններին կանանց մասնակցության մասին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1676 (2004) հանձնարարական

Ընտրություններում կանանց լիարժեք մասնակցությանը սպառնում է երկու գործոն.

- Եվրոպայի մի շարք երկրներում որոշ կանայք այնպիսի հակաժողովրդավարական գործելակերպի պատճառով, ինչպիսին է «ընտանեկան քվեարկությունը», զրկված են ազատորեն իրենց ձայնը տնօրինելու հնարավորությունից:
- գրեթե բոլոր եվրոպական երկրներում կանանց ներկայացուցչությունը ընտրական մարմիններում մնում է անբավարար:

Նպատակ դնել 2020 թ. կանանց ներկայացվածությունը խորհրդարաններում և ուրիշ ընտրական մարմիններում հասցնել առնվազն 40%-ի՝

- օրենսդրության վերանայմամբ տեղական մակարդակի ընտրություններում թեկնածուների ներկայացվածության շեմի սահմանման համար,
- կուսակցական ցուցակներում գենդերային չեզոք քվոտաների սահմանմամբ յուրաքանչյուր սեռի թեկնածուների պահանջվող քանակի համար: Երաշխավորվում է հատկապես օգտագործել երկակի քվոտավորման համակարգը, քանի որ դրանք ընտրություններում կանանց հաղթանակի առավել մեծ հավանականություն են ապահովում.
- քաղաքական կուսակցությունների պետական ֆինանսավորման միջոցառումների իրականացմամբ, որպեսզի խրախուսվեն գենդերային հավասարության օժանդակության հարցում,
- հորդորելով լրագրողներին հավասար չափով լուսաբանել ՉԼՄ-ներում երկու սեռերի թեկնածուների և ընտրական ներկայացուցիչների գործունեությունը, հատկապես նախընտրական շրջանում:

IV Գնչակացիր. Գենդերային հավասարության կենսացործումը. Նախարարների կոմիտեի 11-րդ նստաշրջան (Մադրիդ, 2009 թ. մայիսի 12)

- I. Վերացնել կանանց և տղամարդկանց միջև լիազորությունների անհաշվեկշռի կառուցվածքային պատճառները, այդ թվում բոլոր մակարդակների քաղաքական, հասարակական և տնտեսական որոշումների ընդունման ընթացքում:
- II. Ապահովել կանանց տնտեսական ինքնուրույնությունը և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը՝ աշխատանքի շուկայում և տնտեսական կյանքում հավասարության երաշխավորված պահպանման միջոցով: Դա հնարավոր կլինի ընդհանուր առմամբ խտրականության և, մասնավորապես, գենդերային կարծրատիպերից բխող պատճառների վերացման հաշվին, ինչպես նաև հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության կամ հավասարաժեք աշխատանքի երաշխավորված ապահովման ուղիով:
- III. Ուղղել ուժերը ստեղծված կարծրատիպերի վերացմանը՝ կրթության և գիտական հետազոտությունների ոլորտում գենդերային հիմնախնդրի արդիականացման մեջ հետագա ներդրման ուղիով, ներառյալ գենդերային հետազոտություններ՝ ապահովելու համար, որ կանայք և տղամարդիկ կարողանան լիարժեք իրացնել իրենց տնտեսական և սոցիալական ներուժը:
- IV. Վերացնել կանանց՝ մարդու արժանապատվության և իրավունքների խախտումները՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքարին և կանխարգելմանն ուղղված ընդլայնված և արդյունավետ գործողությունների միջոցով, անհրաժեշտ օգնություն և աջակցություն տրամադրել բոլոր տուժածներին և դատական կարգով հետապնդել դրանց կատարման համար մեղավոր անձանց:
- V. Գենդերային հավասարության հայեցակարգն ինտեգրել իշխանության մարմինների գործունեության մեջ՝ հրապարակայնության, թափանցիկության, բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովման, ինչպես նաև տղամարդկանց և կանանց միջև լիակատար հա-

վասարության հասնելու գործընթացի մասին իրական հաշվետվողականության միջոցով:

Եվ այս նպատակով՝

1. Ընդունել հետևյալ միջոցները, որոնք մեծ նշանակություն ունեն իրականում գենդերային հավասարության հասնելու ճանապարհին խոչընդոտների վերացման համար.
 - Բացահայտել կանանց, այդ թվում՝ խտրականության տարբեր ձևերից տուժած կանանց առնչվող անհավասարության կառուցվածքային պատճառները և ձեռնարկել դրանց վերացման համար անհրաժեշտ սոցիալական և տնտեսական միջոցներ:
 - Վերացնել մարդկային ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործման պատճառ և տղամարդկանց ու կանանց ինքնիրացման համար խոչընդոտ հանդիսացող գենդերային կարծրատիպերը. ձեռնարկել ցանկացած կարգի հատուկ միջոցներ կրթության ասպարեզում կարծրատիպերի բացահայտման և հաղթահարման համար և կոչ անել մասնագետներին ու զանգվածային լրատվության միջոցների, կոմունիկացիոն հատվածի գործիչներին ներկայացնել կնոջ և տղամարդու ոչ կարծրատիպային կերպարը՝ հարգելով մարդու իրավունքները, այդ թվում՝ գենդերային հավասարությունը:
 - Ստեղծել մասնավոր և հասարակական ոլորտներում անվտանգ կյանքի համար պայմաններ՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի կանխարգելման և պայքարի ուղիով:
 - Բարձրացնել կանանց և տղամարդկանց շրջանում իրազեկությունը բռնությունն արմատախիլ անելու անհրաժեշտության վերաբերյալ, որը սպառնալիք է պարունակում խաղաղությանը, անվտանգությանը, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 (2000) և 1820 (2008) բանաձևերի դրույթներին համապատասխան:
 - Ձեռնարկել տղամարդկանց և կանանց միջև պարտականությունների հավասար բաշխման ապահով-

ման և մասնագիտական գործունեության հետ մասնավոր և ընտանեկան կյանքի զուգակցման համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտ միջոցներ՝ կանանց և տղամարդկանց կյանքում տարբեր իրավիճակները հաշվի առնելով, ռեսուրսների արդար և հավասարակշռված բաշխման հիման վրա:

- Խրախուսել տղամարդկանց ակտիվ մասնակցությանը կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության հասնելուն ուղղված բանավեճերին և միջոցառումներին:

V Ի սատարումն տեղական և տարածաշրջանային մակարդակում քաղաքական կյանքում սեռերի կայուն հավասարության, 288 (2010) հանձնարարական (18-րդ նստաշրջան, Ստրասբուրգ, 2010 թ. մարտի 17-19)

2. Բացի այդ, Կոնգրեսը համարում է, որ կառավարության վրա է նախնառաջ ընկնում կանանց և տղամարդկանց միջև հավասարության առաջնդման համար պատասխանատվությունն ապահովելու պարտավորությունը, այդուհանդերձ, հասարակական կյանքի բոլոր մասնակիցները կառավարման բոլոր մակարդակներում պատասխանատվություն են կրում և պետք է մասնակցեն այդ հավասարության պաշտպանությանն ու ապահովմանը, ինչպես նաև սոցիալական և մշակութային զարգացման այն գործընթացներին, որոնք պահանջվում են այս առնչությամբ:
3. Այդ նպատակով Կոնգրեսը հանձնարարում է անդամ պետություններին բարձրացնել իշխանության ազգային, տարածաշրջանային և տեղական մարմինների ներուժը՝ կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովման քաղաքականություն վարելու համար, մասնավորապես հետևյալ ուղիներով.
 - բոլոր մակարդակներում իշխանությունների բոլոր գործողություններում գենդերային չափումը հաշվի առնելը պարտադրող օրենսդրության ընդունում, գնահատել դրա ազդեցությունը և հրապարակել այդ եզրակացությունները (հավասարության ցուցիչները),

- օգնության, այդ թվում՝ ֆինանսական, տրամադրում, որոնք հնարավորություն կտան մունիցիպալիտետներին և տարածաշրջաններին տղամարդկանց և կանանց միջև հավասարության նկատմամբ ինտեգրված մոտեցում հանդես բերել (gender mainstreaming) ծառայություններ մատուցելիս և, անհրաժեշտության դեպքում, սեռերի կայուն հավասարությամբ հասարակության ստեղծմանն ուղղված կոնկրետ ծրագրերի շնորհիվ, կանանց և տղամարդկանց միջև հավասարապես լիազորությունների, ռեսուրսների և ծառայությունների արդարացի բաշխման հիման վրա,
- այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կխթանեն կանանց մասնակցությունը և նման մասնակցության շարունակությունը քաղաքական կյանքում և նրանում, որ զբաղեցնեն պատասխանատու պաշտոններ, ինչպես նաև ընտրություններում կին թեկնածուների համար բարենպաստ միջոցների ձեռնարկման միջոցով (քվտաների համակարգի ստեղծում՝ հետևելով դրանց կիրառմանը՝ զուգակցված դրական գործողությունների այլ գործիքների հետ),
- ընտրություններին կին թեկնածուների ներկայության վերլուծության անցկացում ՉԼՄ-ներում համապատասխան մարմինների միջոցով և կանանց ընտրելուն կոչ անող տեղեկատվական քարոզարշավների ֆինանսավորման հիման վրա,
- վարչական մարմինների բոլոր մակարդակներում հավասարության ապահովում և խտրականության դեմ հստակ դիրքորոշումների հայտնում, ինչպես նաև որոշակի գործիքների մշակման և պատրաստման համար ռեսուրսների տրամադրում. պետական մարմինների աշխատակիցների ծառայողական առաջընթացի մեջ հավասարության պահպանման հաշվառում, աշխատակիցների պատրաստում՝ բյուջեի մշակման յուրաքանչյուր փուլում գենդերային մոտեցման մեթոդների ապահովման համար (gender budgeting):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թումանյան Դ., Գիմիշյան Ս., Ամյան Կ., Թումանյան Լ. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման օպտիմալացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը: Եր., 2003: 38 էջ:

Կարապետյան Վ. Մասնակցություն համայնքի կառավարմանը: Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր: Ուղեցույց (Լախագիծ): Եր., 2003: 26 էջ:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. Զաղաքականության տարբերակներ և ուղիներ: Ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու: Եր., 2004: 398 էջ:

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ուղիները / Խմբ.՝ Դ. Թումանյան: Եր., 2005: 109 էջ:

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում. զարգացման հրամայականները / Խմբ. Դ. Թումանյան: Եր., 2005: 59 էջ:

Թումանյան Դ. Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում: Եր., 2006: 124 էջ:

Համայնքների ընդհանուր պատկերը և դասակարգումը Հայաստանում: Համայնքների ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն / Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն: Եր., 2006: 48 էջ:

Դարբինյան Ա., Եղիազարյան Բ. և ուրիշն. Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները: Տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ: Ե., 2007: 25 էջ:

Ղազարյան Է. Տեղական ինքնակառավարման համակարգի 10 տարիները Հայաստանի Հանրապետությունում: Եր., 2007: 72 էջ

Գիմիշյան Մ.-Ս. Մեկնաբանություններ. Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենք: Եր., 2009, 116 էջ:

Թումանյան Դ., Շահբազյան Վ. Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում. ինչու և ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը: Ձեռնարկ / Համայնքների ֆինանսիստների միավորում: Եր., 2011: 172 էջ:

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում: 2011թ. Գիրք 5 / խմբ.՝ Դ. Թումանյան: Եր., 2012: 178 էջ:

Մասնակցային կառավարում: Ձեռնարկ իշխանությունների համար: Եր., 2011: 54 էջ:

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ: Եր., 2012: 26 էջ:

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ
ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Ձեռնարկ**

Խմբագրական կազմ՝ **Ջենմա Հասրաթյան (գլխ.խմբագիր),
Անահիտ Հարությունյան,
Լիլիթ Զաքարյան,
Գայանե Մերոյան**

Մակետավորումը՝ **Անուշ Մեսրոպյան**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան, 22, 12-րդ հարկ
Հեռախոս՝ (374 10) 53 68 02
Ֆաքս՝ (374 10) 53 67 92
Էլ.փոստ awue.armenia@gmail.com

Տարածվում է անվճար



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

**ASSOCIATION OF WOMEN WITH
UNIVERSITY EDUCATION**

**PARTICIPATORY DEMOCRACY
IN LOCAL SELF-GOVERNMENT**

Manual

Editorial Board: **Jemma Hasratyan (chief editor),
Anahit Harutyunyan, Lilit Zakaryan, Gayane Meroyan**

Design: **Anush Mesropyan**

Association of Women with University Education
0002, Yerevan, 22 Saryan str., 12th floor
Phone, fax: (374 10) 53 68 02, E-mail: aawue@arminco.com

To be distributed free of charge



ASOGHIK

Printed by “Asoghik” printing house
24 Sayat-Nova str., Yerevan (office)
45 Davit Malyan str., Avan (printing house)
Tel: (374 10) 54 49 82, 62 38 63
E-mail: info@asoghik.am